



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹԻԻ 2.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՄՓՈՒԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ՆԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԶԿՆԻ ԵՐԵՄՓՈՒԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿՈՋՄՈՒԹԵԱՆ

28 ՕԳՈՍՏՈՍ 1870



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Զ. ՄԻԻԷԷՆՏԻՍԵԱՆ

— 1870 —

ԸՆՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԱՏԵՆ. 28. ՕԳՈՍՏՈՍ 1870

ՆԱԳԱԽԱՀ

ԱՄԵՆ ԽՐԻՄԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԳ ՀԱՅՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

Գ. ՕՏԵԱՆ ԷՖԷՆՏԻ

Ատենը բացուելէ առաջ, միայն 69 երեսփոխան ներկայ գտնուելով եւ 71 մեծագոյն թիւը չի լեցուելով, Ատեն բանալու կամ չը բանալու խնդիր ծաղեցաւ, եւ բաւական վիճարանութիւն եղաւ, որ մինչեւ ժամը 7 ուկէս տեւեց: Հուսկ յետոյ երեսփոխանաց մեծագոյն մասին առաջարկութեամբ այս խնդիրը քուէի գրուելով, 2 քուէի գէմ 67 քուէով որոշուեցաւ ընտրելու երեսփոխանաց թուոյն մեծագոյն մասը ներկայ գտնուած ատեն Ատենը բանալ եւ այսպէս շարունակել մինչեւ վերաքըննեալ սահմանադրութեան վերահաստատութիւնը: Եւ որովհետեւ արդէն ընտրեալ երեսփոխանաց թիւը 94 էր միայն, եւ 69 երեսփոխան այսինքն ընտրելոց մեծագոյն մասէն աւելին ներկայ էին, Ատենապետ էֆէնտին Ատենը բացաւ եւ նախնիքաց նիստին Ատենազրբութիւնը կարգացուեցաւ:

Ազարեկեան Սարգիս էֆէնտին գիտեց թէ վերաքըննեալ սահմանադրութեան խնդրոյն առթիւ Բ. դռնէն եկած ծրագրին համար ինք ըստ չէ թէ յանձնաժողովն անգործադրելի զըտած էր զայն, այլ թէ բաւական տարբերութիւն տեսած էր անոր ու առջի սահմանադրութեան մէջ: Որոշուեցաւ որ սոյն գիտողութիւնը արձանագրուի, եւ Ատենազրբութիւնը ընդհանուր հաւանութեամբ ընդունուեցաւ ժողովէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենազրբութիւնները շատ երկար ըլլալով, անոնց ընթերցումը մէկ երկու ժամ կ'սպառէ, զորս ուրիշ օգտակար խնդրոց կրնայինք գործածել, կ'առաջարկեմ որ Ատենազրբութիւնը գրուելէ ետեւ անմիջապէս չըրատարակուի տպագրութեամբ, երեսփոխանք օրագրաց մէջ կարդան զայն եւ գիտողութիւննին յաջորդ նիստին ընեն եւ արձանագրել տան յետագայ ատենազրբութեան համար, ինչպէս օրէն է:

ՓԱՓԱՋ-ԱՏԵՓ. ԷՖ. — Փոխանակ հրատարակուածը սրբագրելու, աւելի լաւ է երեսփոխանաց ազատութիւն տալ, գրուած ատենագրութիւնը կանխաւ կարգալու եւ իրենց խօսքերուն մէջ գտնուած սխալներն ուղղելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենազրբութեան հեղինակ Ատենաբանները չ'են, այլ ժողովին գիտանաղպիւնները: Սկիզբէն ՚ի վեր կանոն եղած է որ ատենաբանք յաջորդ նիստին գիտողութիւն կ'ընեն, եւ գիտողութիւննին կ'արձանագրուի յաջորդ նիստին ատենազրբութեանը մէջ:

ՓԱՓԱՋ-ԱՏԵՓ. ԷՖ. — Առջի նիստին Գիւանին կողմէն մեզի ըսուեցաւ որ սղագրութիւն չ'ունենալով չ'կրնար Գիւանը ճշգրութեամբ Ատենաբանից խօսքերն ամփոփել. այս սլարագային մէջ Գիւանը կը սլարատարի բազմաթիւ Ատենաղպիւր ունենալ:

յայտնի եղաւ որ ինքն ալ փափաքող է ատենական կանոնաց հաստատութեանը , բայց ինչպէս որ ըսաւ զեւ պատրաստուած Ծրագիրն ինք տեսած չէ : միւս կողմէ Ս. Նախագահն ալ կանոնագրութեան հին Ծրագիր մը յիշեց եւ խնդրեց որ այս երկու Ծրագիրներն մեկտեղելով նոր մը խորագրուի եւ վաւերացուի : ուստի այս գործը կրնայ ուրիշ անգամի մնալ եւ ժողովը անցնիլ յաջորդ խնդրոյն :

ԱՏԵՆԱՊԵՏ-ԷՖ. — Մէկ քանի առաջարկութիւն եղան , որոնք կրնան 'ի մի ձուլիլ եւ Ատենական կանոնաց ընթացումն ու հաստատութիւնը միւս նիստին թողուլ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ-Օ. ԷՖ. — Ես առաջարկեցի որ խնդրոց կարգին ամենէն վերջինն ըլլայ այս խնդիրը , միւսնոյն առաջարկութիւնս դարձեալ կը կրկնեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ-ԷՖ. — Ժողովը չ'կրնար երկարատեն ատենաց ատենական կանոնի մնալ , անանկ

խնդիրներ կրնան յերեւան գալ՝ որոնց լուծման համար նոյն կանոնաց գոյութեան պէտք ունենանք . ուստի մինչևեւ յառաջիկայ նիստին Ծրագիրներն ամբողջ կարգալով պէտք է այս խնդիրն լուծենք եւ վերջացնենք :

Վերջապէս այս խնդիրը քըռէի գրով լով մեծագոյն մասին հաւանութեամբ որոշվեցաւ յաջորդ նիստին թողուլ :

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ

Խնդրոց կարգը՝ վերաքննիչ յանձնախումբին տեղեկագրին գալով Ատենական էֆէնտիին հրաւիրմամբ նոյն յանձնախումբին Ատենական Ռուսինեան էֆէնտին իբրեւ տեղեկարար կարգաց նոյն տեղեկագրերը , որոյ օրինակն ահաւասիկ

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԳ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԺՂՂՎՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Ամենպատիւ Սրբազան Նախագահ , եւ Երեսփոխան Էֆէնտիներ :

Վերաքննիչ Յանձնախումբը՝ զոր ձեռ վրատաճութեամբը պատուեցիք , բարեբաստիկ կը համարի զինքը որ կրցաւ այսօր իր աշխատութիւնը Ձեզի ներկայացնել , միանգամայն ցաւօք կը խոստովանի թէ այս ամենակարեւոր գործը պէտք եղածէն աւելի ուշացաւ իրաւ , բայց ասոր պատճառները իր կամքէն անկախ պարագաներէ ծագած ըլլալով , կորուսված ժամանակին պատասխանատուութեանը մէջ իր բաժնին համար միայն զոնէ Ձեր ներօրամտութիւնը կը խնդրէ :

Սահմանադրութեան վերաքննեալ օրինակը՝ տարի մը կայ որ ներկայացուցած ըլլալէն ետքը Ձեր Յանձնախումբը պարտ կը համարի իրեն՝ Ձեզի այսօր համատու եւ ընդհանուր տեղեկութիւն մը բերել վերաքննութեան մէջ իր բռնած ձևերուն , նկատողութեան առած կետե-

րուն , եւ հարկաւոր դատած փոփոխութեանցը վրայ :

Բ. Գունէն զրկված ծրագիրը , եւ ազգին նախկին սահմանադրութիւններն ուշի ուշով քննելէն ետքը , բարեմասնութիւններ տեսաւ անոնց մէջ եւ ասոնց հետ փոփոխութեան կարօտ կետերը Յանձնախումբը չէր կրնար միայն այս կետերը մեքենապէս նշանակել ու անցնիլ Ազգին պէտքը այս չէր , այլ իրեն ինչ տեսակ սահմանադրութիւն պէտք էր նէ զանի ունենալ էր , եւ կը կարծենք որ ազգային ժողովն ալ այսպէս կը համոզնայ վերաքննութիւնը . ուստի զայն ընել կարծեց Ձեր Յանձնախումբը , եւ ահաւասիկ ինչպէս եւ ինչ պատճառներով :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Վերաքննիչ Յանձնախումբը՝ իր աշխատութեանը ընթացքին մէջ չէր կրնար իրեն ուրիշ յեցակետ ընտրել եթէ ոչ ընկերական ամենայն

դաշանց այն տիեզերական սկզբունքը՝ էր.....ն + .. պարտէ , ընդ որ յեցեալ են Սահմանադրութեան պատուանդանքը . չէր կրնար ուրիշ առաջնորդ բռնել իրեն եթէ ոչ այն ոգին որ ի սկզբանէ մինչևեւ ցարդ տիրած է ու կը տիրէ մեր ազգային սահմանադրութեանց մէջ , որ երեսփոխանական դրութեան ոգին է , որ հաւատարութիւն կը հաստատէ ամեն ազգայնոց մէջ , եւ օրինաւորութիւն կը պատուիրէ ազգային ամեն անօրինութեանց մէջ :

Օրինաւորութիւն . Ի՞նչ է օրինաւորութիւնը , եթէ ոչ՝ հաւատարմութեամբ առնված ու ազատապէս բացայայտված կարծիքը բազմութեան , այսինքն մեծագոյն մասին : Այս կարծիքը կրնայ սխալիլ , սխալականութենէ զերծ չ'է , բայց օրինաւոր է . եւ բնտուվածն ալ օրինաւորութիւն է :

Օրինաւորութեան սկիզբը Հայաստանեայց Եկեղեցւոյ աւանդական սկիզբներէն է իբրեւ յայն է պարտէ . եւ բնտուվածն ալ օրինաւորութիւն է : Արդարեւ որ հայրապետ կամ որ եպիսկոպոս Հայ Եկեղեցւոյ քահանայի մը ձեռնադրութեան կը համարձակի առանց ժողովուրդին հաւանութիւնն առնելու ձեռնադրելուն արժանաւորութեանը վրայ . երբ անբաշտ բառը հնչի ժողովուրդին մէջէն , հարուստի ըլլայ հնչող բերանը թէ աղքատի , աստիճանաւորի թէ անաստիճանի , իշխանի թէ հովուի , հոգ չ'է , զօրութիւնը նոյն է . իսկոյն սրբագինագործ աջը զոլողոյստով ետ կը քաշի . իսկ եթէ համարձակի ձեռնադրութեան՝ ընդդէմ վկայութեան ժողովրդեան , ապօրինաւոր համարեալ է նոյն ձեռնադրութիւնը Եկեղեցւոյ առջեւ :

Ահա այսքան դժուար է հաւատարմութեան եւ օրինաւորութեան վարդապետութիւնը Հայ Եկեղեցւոյ մէջ , եւ այսպէս ժողովրդային է ի սկզբանէ անտի մեր եկեղեցական վարչութիւնը եւ հետեւաբար եկեղեցականէն կախեալ աշխարհական գործոց ղեկավարութիւնը , որ մնար միայն այս սկզբանց գործածութիւնը կարգի կանոնի տակ առնուլ , որն որ Սահմանադրութեան գործին է , Սահմանադրութեան՝ որ ուղղապէս այս հարկաւորութենէն ծնաւ . եւ որ ուղղակի այս գլխաւոր նպատակին պիտի ծառայէ :

Հոս կ'ըմբռնենք ամենայն եռանդով զոր խնդիրը կ'արժէ , այն առիթն որ մեզ կը ստիպէ երկու բառ բնի մեծագոյն մաս ըսված սկզբունքին եւ օրինաւորութեան խնդրին վրայ , որով կարելի պիտի ըլլայ բացատրել զոնէ ըստ մեծի մասին թէ ո՞ր է Սահմանադրութեան թիրիւն , թէ որ թիրութիւնն իր մէջ եւ որը իր-

մէ դուրս բնտուելու է , եւ վերջապէս թէ ինչո՞ւ օրինաւորութիւնը արդիւնք չ'է տուած մինչևեւ ցարդ ազգին մէջ եւ սահմանադրական վարչութիւնն անպտուղ մնացած :

Ժողովուրդը ամեն բանի մէջ օրինաւորութիւն կը պոռայ . օրինաւոր ժողովներ ու խորհուրդներ ունեցանք , օրինաւորապէս ընտրեալ պատրիարք ու ազգային պաշտօնեայններ ունեցանք , օրինաւորապէս՝ այսինքն մեծագոյն մասով խնդիրներ լուծեցինք , եւ դարձեալ հոն ենք ուր էինք առաջ , եւ հոն են այսօր ազգային գործերը ուր էին նախ քան ըզՍահմանադրութիւնը :

Ո՞ր սահմանադրական պատրիարք ազգօգուտ նոր յիշատակ մը ձգած է , որ սահմանադրական վարչութիւն նոր բարեկարգութիւն մը հաստատած է : Տաս տարի է Սահմանադրութիւն ունինք , ազգային ուսումնարան մը չ'ունինք մայրաքաղաքիս մէջ . զոնէ անկէ առաջ ազէկ գէշ մէկ հատ մը ունէինք . ազգային պատասխարան մը հիւանդանոց անունով սահմանադրական օրերէն շատ առաջ ունէինք , եւ փառք տալու է թէ որ այսօր առջինէն գէշ վիճակի մէջ չ'է . դեռ ազգային հանդանակութիւն մը չ'է հաստատված . տաս տարի է որ երեսփոխանական ժողով ունինք եւ դեռ կ'սպասենք զաւատական երեսփոխանաց գալուստը : Սահմանադրութիւնը զաւառաց մէջ դեռ ի գործ չ'է դրված , եւ չ'ենք իշխեր հարցնել թէ պօլսեցիք արդեօք ինչ շահեցան անոր տասնամեայ գործածութենէն :

Այո՛ , չ'ուրացվիր , շօշափելի են այս չարիքը . բայց ո՞ր արդեօք պէտք է բնտուել այս չարեաց պատճառը , զի ուր գտնենք զանի դարմանն ալ հոն պիտի տեսնենք :

Արդեօք Սահմանադրութեան մէջ է , ոչ , եւ ոչ իսկ օրինաւորութեան մէջ . այլ սոյն սկզբանէ ծուռ ըմբռնման եւ գէշ գործածութեանը մէջ է պիտը , եւ ասոր հետեւանքն է ըստ մեծի մասին սահմանադրական վարչութեան ապարդիւն վիճակը . — Աւելի հեռին չը գնացած , դարձեալ կը կրկնենք , խօսքը հոս անհատից վրայ չ'է , այլ ընդհանուր սկզբունքին վրայ եւ անոր ծուռ կամ շիտակ ըմբռնված ըլլալուն եւ անոր գէշ կամ ազէկ գործածութեանը վրայ է , վերջապէս սկզբունքն է դատաժնիս եւ ոչ մարդկիլը :

Մեծ-հոյն . — Այո՛ չ'ուրացվիր , օրինաւորութիւնը ձայնից բազմութեան մէջ է եւ մեծագոյն մասով կը գոյանայ . չէ թէ՛ վասն զի մարդոց շատ անսխալական է եւ սխալականք քիչ , (գուցէ ասոր հակառակն եղած ըլլայ) , այլ ու-

դիրքն ու ճշմարտութիւնը որ ամեն խնդրի մէջ բնասու-
վածն է . իբրև վիճակահանութեան միակ վաս-
տըկող թիւ՝ այնքան հաւանական է ձեռք բե-
րել որքան աւելի տոմսակ առնիր . 10 տոմսակը
անտարակոյտս 10 անգամ աւելի պատեն ունի վաս-
տըկելու քան ըզմէկ տոմսակը . սաի բազմաութեան
կամ մեծագոյն մասի ըսկզբունքին
Նիւթուն կամ թըսթիւն կողմն է միայն . բայց
օրինակութիւնը ուրիշ կողմ մ'ալ ունի , ուրիշ
յատկութիւն մ'ալ կը պահանջէ , բարդուն այն-
պիսի պայման մը առանց որոյ ճշմարտութիւն
ձեռք բերել յուսալը երազելու պէս է . այս է ա-
կան պայմանը բազմութեան ձեռնասու-
թիւնն է :

Զեհեանքի . — Մեծագոյն մասը մարմի-
նն է օրինակութեան , իսկ հոգին ձեռնա-
սութեան մէջ է : Օրինակով մը՝ թէպէտ քիչ
մը չտարածանց՝ սաստիկ կը դարնէ աչքի այս ա-
ռաջագրութեան ուղղութիւնը . արտարանա-
կան խնդիր մը լուծելու համար մէկ բժշկի կար-
ծիքը աւելի ոյժ ունի քան թէ հարիւրաւոր բը-
ժիշկի չեղող անձանց կարծիքը , վասն զի բը-
ժիշկը իր մասին մէջ ձեռնհաս է . նոյնպէս եւ
պատկեր մը շինագատելու կամ երկու պատկեր
բազմատելու համար մէկ պատկերհանի կարծիքը
աւելի յարգ ունի քան թէ զեղարուեստից ան-
հմուտ հարիւրաւոր անձանց դատումը . իսկ 10
պատկերհանաց կամ 10 բժշկաց մէջ 6 ին միա-
բան կարծիքը անշուշտ աւելի ծանրութիւն ու-
նի քան ըզմէկս 4 ինը , վասն զի տասն ալ ձեռն-
հաս են եւ դէմ առ դէմ կրնան կըրովի նոյն
տեսակ ծանրութեամբ . ուստի նժարին մէկ կող-
մը որքան բազմանայ ձեռնհասից թիւը , այն-
քան կ'աւելնայ ճշմարտութեան հանդիպելու
հաւանականութիւնը , մինչդեռ 100 անձեռն-
հասից մէջ մէկ անգամ իսկ չը կայ հաւանակա-
նութիւն : Յ մարդ , Յ ծառ , միշտ տաս կտոր
բան է , բայց ոչ 10 մարդ կ'ընէ՛ եւ ոչ 10 ծառ .
զուգակշտութեան գրոված բաներու մի եւ նոյն
տեսակէ ըլլալը թրուակիտական հարկաւորութիւն
է . հոս է մեծագոյն մաս ըսված սկզբունքին իս-
կական արժէքը : Աւստի ներելի է հետեւցնել
թէ մեծագոյն մասի որոշումը միշտ օրինակոր
է , թէ եւ սխալ ըլլայ . բայց մեծագոյն մասը կըր-
նայ ինք օրինակորապէս կազմեալ չըլլալ երբ
ձեռնասութեան պայմանը չը պարունակէ , եւ
խնդիրը՝ թէպէտ օրինակորապէս որոշեալ , սա-
կայն ճշմարտապէս լուծեալ չըլլալուն համար ,
իր պտուղը չը տար :

Ահա ասոր համար է որ ժողովները միշտ կա-

նոն կամ սովորութիւն ունին մասնաւոր եւ յա-
տուկ խնդիրներու համար՝ որոց լուծումը մաս-
նաւոր հմտութիւն կը պահանջէ , նախ իրենց մաս-
նաւոր դիւաններուն գրկել կամ յատուկ յանձ-
նախու մի մը ձեռք յառաջագոյն վիճել ու սեր-
տել տալ եւ ապա հասուն հանել զանի յատեան
ու ժողովին որոշմանը յանձնել : ասով ա-
մեն անգամ տեղեկութիւն կրնայ ստանալ խընդ-
րին այլ եւ այլ մասանց վրայ , եւ ձեռնհասից
զանազան դատողութիւնները տեսնելով ու բազ-
մատելով՝ բնական արամարամութեամբ կը հաս-
նի՛ վերջապէս ինքն ալ իր վերջին որոշումը հեղի-
նակել , եւ խնդիրը ուղիղ լուծվելու կարելիու-
թեան կը հասնի : Քանզի անկարելի է , եւ չը կայ
երբէք այնպիսի ժողով մը որոց բոլոր անգամք
բոլոր խնդրոց մէջ առանց նախագոյն սերտե-
լու , ձեռնհաս հմտութիւն ունեցած ըլլան :

Ահա այս հարկաւոր կանոնը՝ չ'ունենալուն
կամ այս օգտակար սովորութեանը միշտ հե-
տեւած չըլլալուն համար է զլիսաւորապէս որ
սահմանագրական վարչութիւնը էջ մը խնդիր-
ներ չ'է կրցած որոշել կամ ուղիղ չ'է լուծած ,
(թող թէ եւ ասոր հետ մէկ անը որոշած խըն-
դիրներուն համարն ալ չ'է պահանջած գործա-
դիր մարմիններէն) . ուստի իր պաշտօնն ալ յամ-
լութիւն դատապարտեալ է :

Ահա ասոր համար է որ Յանձնախումբը Սահ-
մանագրութեան յօդուածոց մէջ ամեն ուր որ
պաշտօնակալութիւն կամ վարչական հեղինա-
կութիւն տեսած է , հոն ձեռնհասութեան պայ-
մանը միշտ յիշել ուղած է :

Այս առաջագրութեան ճշմարտութեամբը
այնքան թափանցեալ է Ձեր Յանձնախումբը որ՝
ուղեց աւելի հեռին երթալ եւ մասնաւորէն ընդ-
հանուրին ելնելով կամ լու եւս բուն իսկ օրի-
նակորութեան աղբիւրը ելնելով այսինքն մաս-
նաւոր ընտրութիւններէն ընդհանուր ընտրու-
թեան , հոն ուղեց խել տորձել զխան իր ար-
մատէն , ընտրողութիւնէն սկսելով բնուեղ ձեռն-
հասութեան պայմանը :

Ընտրելեաց ձեռնհասութեան միայ Սահմա-
նագրութիւնն իր ըսելիքն ըսած է , անկէ աւե-
լին ընտրողաց դատողութեանը յանձնած է . իսկ
ընտրողաց ձեռնհասութեան պայմանը ճիշտ կա-
տարեալ եւ արդարապէս դեռ չէ՝ որոշված Սահ-
մանագրութեան մէջ , եւ ուղղներ եղած են որ
այս պայմանը հարստութեան ատիճանէն առ-
նովի , եւ զրամի կապի բանը , Ջայս կէտը ա-
հա կը ցանկայ Յանձնախումբը յատկապէս Ադ-
գային ժողովին լրջամիտ ուղադրութեանն են-
թարկել :

Զեհեանքի . — Ամեն մարդ
կը ծնի հաւասարապէս միեւնոյն իրաւունքնե-
րով ու պարտիքներով , բայց ոչ որք ծնած օրէն
կարողութիւն ունի զանոնք գործադրելու : Հա-
սակ մը կայ որ կը բերէ բնականապէս զայս կա-
րողութիւնը , որ ընդհանրապէս ընդունված է
Յ եօթ տարուց այսինքն 21 տարեկան հասակը :
Այս հասակը ընդունված է՝ չէ թէ մարդու այս
ինչ բարձրութեամբ մարմնապէս աճեցեալ ըլլա-
լուն համար , այլ վասն զի բնաւորութիւն
կ'ենթադրէ . եւ յիբաւի անդամագինապէս նկա-
տելով մարդկային գործարանաց զարգացումը
ընդհանրապէս այս հասակէն կ'ըսկսի կատարե-
լութեան հասնիլ , եւ հետեւաբար անոնց կենսա-
դրնական պաշտօնավարութիւնը , եւ այս կա-
տարելութիւնը կը լրանայ 3 ինն տարուց այսին-
քն 27 տարեկան հասակին , յորմէ կ'ըսկսի ընտ-
րելիութեան պայմանը :

Հասակը՝ լով Նիւթուն պայման է ձեռնհաս-
ութեան ընտրողութեան եւ անոր կարողութեան
մէկ մասը առաջին մասը միայն կը կազմէ . երկ-
րորդ այսինքն լրացուցիչ մասը՝ մաքի մշակու-
թեան մէջ բնուեղու է , այսինքն դատարակու-
թեան մէջ : Ահաւստիկ անձ մը որ քրւէն ձեռ-
քը կը ներկայանայ , այսինքն կ'ուղէ ընտրել այն-
պիսի անձ մը որ ազգային գործոց խառնովի ու
ընկերական խնդրոց մէջ վճիռ տայ : Այս ընտ-
րութեան կարող ըլլալու համար՝ միթէ հար-
կաւոր չէ որ նախ ինքը զխանայ գոնէ հարն-
ւանցի մը թէ ինչ է ազգը , ինչ են իրաւունք
ու պարտիք , եւ ընկերական յարաբերութիւնը ,
ինչ է ընդհանրութիւն եւ ինչ է անհատակա-
նութիւն : Ձեռք ուղեր պահանջել անկէ ընկե-
րաբանութեան բարձր խնդիրներու հմտութիւն ,
բայց քանի որ ինքը քիչ շատ գոնէ ստորին առ-
տիճանի ծանօթութիւն չ'ունի այս բաներուն
մէջ , ինչպէս կարող է ճանաչել զունեցողը :

Աստիճան մը կայ մտաւոր մշակութեան որ
կը բերէ զայս կարողութիւնը , եւ է ընդհանրա-
պէս նախնական դատարակութիւնը . այս առ-
տիճանը՝ մասնաւորապէս զձեռնհասութեան
ընտրողութեան եւ զանոր կարողութիւնը կը լր-
րացնէ :

Քանի որ ընտրողութիւնը՝ ձեռնհասութեան
այս երկու էական պայմաններն ամբողջ չը պա-
րունակէ , ընդհանուր ընտրութիւնը պակասա-
ւոր համարելի է միշտ եւ շատ անգամ քիչ ար-
դիւնք սպասելու է անկէ :

Ամեն երկրի եւ ամեն ընկերութեանց մէջ
ուր ի գործ զըրված է ընդհանուր ընտրութիւնը ,

անոր տուած քիչ շատ բարի արդիւնքը՝ հոն
դատարակութեան աւելի կամ պակաս ծա-
ւարմանը հետ բազմատեսի է :

Ձեռնհասութեան այս երկու պայմանները՝
որով հոգի կ'ըստանայ օրինակորութեան մար-
մնը , ընդհանուր ընտրութեան կենսատու պայ-
մաններն են , եւ ասոնցմէ դուրս կամ մանա-
ւանդ ասոնց դէմ պահանջված պայմանները հա-
րուած են մահաբեր՝ Օրինակորութեան սկզբուն-
քին , եւ մեղանք ընդդէմ արդարութեան :

Ձեր Յանձնախումբին բուն բաղձանքն ե-
ղաւ ընդհանուր ընտրութեան պայման դնել
նախնական դատարակութիւնը , բայց չը հա-
մարձակեցաւ , վախնալով թէ այս նորոգութիւնը
գուցէ այսօր զանազան դժուարութեանց ծը-
նունդ տայ . միայն միտքերը ազգային մէջ
այս կողմը ձկրեցնելու համար , այս խորհուր-
դին սերմը միայն ձգել ուղեց Սահմանագրու-
թեան մէջ , որ իր ժամանակին գոնէ կարենայ-
բողբոջիլ ու բարդաւաճիլ , եթէ այսու ամե-
նայիւ Ադգային ժողովին իմաստութիւնը այ-
սօրվրնէ յարմար չը գտէ զանի ընդունիլ :

Ուստի կ'առջալ էր զխանալը միայն պայման
զրաւ առ այժմ ու անցաւ . ասով գոնէ ընդ-
հանուր ընտրութեան մէջ երբեմն պատահած
անակողութեան մը առջեւն առած կ'ըլլայ ,
այն է՝ ուրիշի գրել տալով չուզված անուն
մը գրած ըլլալու խաբէութիւնը . եւ յիբաւի
լով դիր ճանչել ու գիր դժել զխանալու լերկ
պայմանը ասկէ դատ օգուտ մը չ'ունի :

Բայց ով չը գիտէր այս խորհրդին խորը՝ օրէ-
նըսորին վերջին գիտաւորութիւնը՝ թէ ուր կ'ու-
ղէ հասնիլ , եւ ով կը տարակուսի թէ կարգալ
գրել զխանալը արդեամբ իսկ եւ զօրութեամբ
կ'ենթադրէ դատարակութեան աստիճան մը ,
գոնէ նախնական աստիճանը . այլ կերպով բանք՝
մարդկութեան հարկաւոր կամ ամեն մարդու
անհրաժեշտ գիտելիքը :

Ընտրողութեան ձեռնհասութիւնը՝ փոխա-
նակ հարստութեան՝ դատարակութեան երաշ-
խաւորութեանը տակ դնելը խիստ պահանջոտ
ըլլալ չ'է , եւ Ձեր Յանձնախումբը ապահով է
որ ազգային ժողովը՝ զայս պայմանը խիստ չը
դատելէն դատ , անհրաժեշտ ալ պիտի համարի ,
եւ անոր դերագոյն հեղինակութենէն ըզմէլ կը
յուսայ որ՝ եթէ անտեղութիւն չը տեսնէ , դա-
նի այս վերաքննութեան մէջ սիրով կ'ընդունիմ :

Ասով ընդհանուր ընտրութիւնը իր արդար
սահմանին մէջ բերած հաստատած , իր ճշմարիտ
ոյժը ձեռքը տուած եւ իր բարոյական զօրու-

թեան անոր բարձրացումը կ'ըլլայ, ընդհու- նուր դաստիարակութեան նոր գրգիռ մը եւ Ազգին՝ ծառայութեանց էն գեղեցիկը մատու- ցած կ'ըլլայ:

Այն ատեն 66 յօդուածին առաջին պարբե- րութիւնը սապէս սրբագրել կը հարկաւորի:

«Առէն հայ էր ինչի առջին թիւնքն է 21 հարբէիս, եւ ընթերցի է 27 հարբէիս, այն որ շինեալսն քառասն- րիսն է»:

Այն ժամանակ ընտրողք՝ փոխանակ ատեն ատեն 75 զրուշով քրէթուղթ գնելու, մէկ անգամ 30 զրշ տարով իւրաքանչիւրն իր թաղին դպրոցէն ուսումնագիր մը կ'առնէ, եւ զայս գումարը թաղական անտուղը կը շահի, որ եւ արդէն իր օրինաւոր մուտքերուն կարգն է մաս- նաւոր հանգանակութեանց մէջ:

Չեր Յանձնախումբը՝ երեսփոխան Էֆէնտի- ներ, չը կրնայ իր խիղճը հանդարտել, եթէ չը մասնէ ձեր զօրութեան երկրորդ ապականիչ մը որ ոչ սակաւ քան կը բերէ սահմանադրական Ազգութեան, այն է՝ համարաւթիւն ու հա- մարաւթիւն անհոգութիւնը: Այս բառե- րը Յանձնադրութեան մէջ դեռ լոկ տառ մը- նացած են. ուր են պաշտօնէից կողմէն ըլլալու տարեկան համարատուութիւնները՝ զոր Յանձն- ադրութիւնը կը պատուիրէ, ուր են ուսում- նական, անտեսական, ելմտական խորհրդոց հա- մարատուութիւնները. երբ համարատուութիւն կամ գոնէ առաջարկութիւն մը բերաւ կրօնա- նական ժողովը, ինչ գործեց տաս տարիէ ի վեր, որ այնքան պարտաւորութիւններ գրած է անոր վրայ Յանձնադրութիւնը:

Մանր պատասխանատուութեան տակ են Ազ- գին առջեւ այս պաշտօնակալութիւնները. մաս մ'այ այս պատասխանատուութիւնէն՝ եւ ասի խոստովանինք գոնէ զըմամբ՝ երեսփոխանաց ժողովին վրայ կը ծանրանայ, ինք ալ համար հարցած չ'ունի: Երբ տեսնէ ծառան թէ տէրն անհոգ է հայել բընտաւելու, ինչ աստիճան խը- նամ կը տանի իր ծառայութեանը մէջ:

Յանձնադրութեան արատ զնոցները՝ պէտք էր երկու աչք բանային, մէկը նախ իրենց վրայ, յետոյ Յանձնադրութեան վրայ մը: Երբնաց կատարելութիւնը հերիք չ'է Ազգի մը համար, երբ գործադրութեան մէջ քաւականութիւն կամ բանօժարութիւն ուղկսի:

Վերաքննիչ Յանձնախումբը՝ իրեն յանձնը- ված պաշտօնին ուղւոյն թերի չը պատասխանե- լու նախանձով, բընտեց Յանձնադրութեան մէջ այս ախտին տեղը եւ տեսաւ որ Յանձն-

նադրութեան իր մէջը չ'է, այլ զանի գործա- գրողաց քով է. ուստի տեղը միայն ձեզի ցու- ցընել իրեն պարտք կը համարի եւ հերիք, դի գեղն ալ հոն է:

Հիմնական սկզբանց վրայ այս ընդհանուր տեղեկութիւններէն ետքը անցնինք մասնաւո- րաց, Յանձնադրութեան քանի մը գլխաւոր կեանքուն եւ գլխոց՝ որոց տեղեկադրութիւնը աւելի կարծառօտիւ պիտի ըլլայ:

ՄԱՍՆԱԿՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

1. Ընտրութիւն երեսփոխանաց — Կերտնական վարչութեան գլխին մէջ գլխաւոր կետը՝ երես- փոխանաց ընտրութեան կերպն էր, եւ զանի նախ ջանաց բարեկարգել ձեր Յանձնախումբը:

Այս մասին մէջ անհամաձայնութիւն մը կար նախկին սահմանադրութեանց մէջ, սա է. Պոլ- սի երեսփոխանք ուղղակի պօլսեցուց կողմէն ընդհանուր քրէթարկութեամբ կ'ընտրվէին, իսկ գաւառականք՝ փոխանակ նոյնպէս գաւառա- ցուց ուղղակի քրէթարկութեամբն ընտրվելու, անուղղակի կերպով այսինքն գաւառական ժո- ղովոց ձեռքով կ'ընտրվէին: Այս անհամաձայ- նութիւնը աչքի զարկած օրէն անմիջապէս բառ- նալ պէտք էր, չ'էր կրնար ըլլալ օրէնք մը պօլ- սեցուց եւ այլ օրէնք գաւառացուց համար: Կամ պէտք էր ըսել գաւառացուց՝ դուք ալ պօլ- սեցուց պէս ընդհանուր քրէթարկութեամբ ուղ- ղակի ընտրեցէք ձեր երեսփոխանները, կամ պօլսեցուց օրէնքը փոխել:

Առջի պարագային մէջ շատ մը դժուարու- թիւններ կը ծագին անյաղթելի. թողունք մէկ- դի այս դժուարութիւնները, գանք իրաւունքի մասին. եթէ իրաւունք ունի անհատ մը գա- ւառեցի թէ պօլսեցի, անմիջնորդապէս ինք ընտ- րելու իր ազգային երեսփոխանը, ինչն էր իրաւունք չունենայ Ազգին Պատրիարքն ալ ուղղակի ինք ընտրելու, ազգային Յանձնադրութիւնն ալ ուղղակի ինք վճռելու, ազգային հանգանակու- թիւնն ալ ինք քրէթարկելու, Ազգին ամեն պաշ- տօնաւորներն ալ իւր քրէթովը ցուցնելու, եւ մինչեւ ուր կարելի է իրաւապէս դադրեցնել այս իրաւունքը չենք կրնար գուշակել: Առոնք իրաւ իր իրաւունքն են, գործին տէրն է, ա- մեն բանի մէջ ձայն ունի, անթխտելի է. բայց ժխտելի մասը սա հարցման մէջ է՝ թէ արդեօք այս ձայնը ուղղակի այսինքն առանց միջնորդի պիտի հանէ ամեն տեղ եւ ամեն գործի մէջ,

թէ միջնորդապէս: Երբ անհատը առանց միջ- նորդի ամեն գործի մէջ ձայն հանել ըսկըսի, անկարգութեան ու անիշխանութեան յառաջա- բանն է, օրինաւոր հաստատութեանց կործա- նում կը գուշակվի:

Անհատները՝ անժողովելի բազմութեամբ մե- ծաթիւ ըլլալնու համար է որ անոնց պատգա- մաւորութեամբ խօսելու հարկաւորութիւնը ըն- կերական բարեկարգութեանց հիմնական եւ ան- տընօրինելի պայմանն եղած է. եւ հոն է իսկա- պէս երեսփոխանական դրութեան էութիւնը: Ուստի Յանձնադրութիւնը ամեն մէկ անհա- տէ չը պահանջեր զազգային երեսփոխանը, այլ Ազգէն կը պահանջէ, ուր որ Ազգը խումբ խումբ պաշտօնապէս ներկայացեալ է: Ո՛ւր է Ազգը Պոլսի մէջ. — Ամեն տեղ թաղերու մէջ է, եւ թաղին անհատները պաշտօնապէս կը ներկայա- նան թաղական ժողովով. թաղին հետ գործ ու- նեցողը՝ թաղին ամեն անհատներուն հետ չը կըր- նայ խօսիլ, հարկաւ թաղը ներկայացնող մարմ- նոյն հետ պիտի խօսի. նմանապէս թաղին ան- հատները իրենց ժողովին բերնովը պիտի խօսին զԱզգը ներկայացնող մարմնոյն հետ: Ո՛ւր է Ազ- գը գաւառներու մէջ. — Հոն ալ դարձեալ թա- ղերու մէջ է, բայց գաւառաց թաղերն ալ դար- ձեալ հոն գաւառական ժողովներու մէջ պաշ- տօնապէս ներկայացեալ են: Ուստի Յանձնա- դրութիւնը նախ այս ժողովները կը կազմէ ա- մէն տեղ անհատին քրէթովը, եւ յետոյ՝ Պոլսի մէջ թաղական ժողովներէն եւ գաւառաց մէջ գաւառական ժողովներէն կը խնդրէ զազգային ե- րեսփոխանները: Անհատը՝ որ միշտ թաղի մը մէջ բնակեալ է ուր որ ըլլայ, թաղական գոր- ծոց մէջ ուղղակի ձայն ունի: Այն եկեղեցւոյն մէջ ուր ինք կ'աղօթէ, այն դպրոցին մէջ ուր յատկապէս իր զաւկները կը կրթվին, այն թա- ղին մէջ ուր ամեն կերպով ինք միայն է հան- գանակող, ուղղակի է իրաւունքը. եւ եթէ ընդ- հանուր ընտրութեան անթխտելի իրաւունք մը կայ անհատին համար, անի թաղական ընտրու- թեանց մէջ է եւ անով կը ներկայանայ անմիջ- նորդապէս թաղական ժողովին մէջ, եւ հոն է իր ուղղակի երեսփոխանը, իր անմիջնորդա- կան պատգամաւորը. Ընդհանուր ժողովին մէ- ջինները պաշտօնապէս ազգային երեսփոխան- ներ են, որոնք ալ անհատ չեն ներկայացներ, այլ ուղղակի պաշտօնական ժողովներ եւ հետե- ւաբար անհատներ, զի այն ժողովներն ալ ան- հատներէ ընտրեալ են:

Այս կերպով ազգային երեսփոխանք աւե-

լի զտեալ կը համարվին, դիրենք ընտրողներն ալ ընտրեալ են, եւ իրենք՝ ընտրելոց ընտրեալն են:

Վերաքննիչ Յանձնախումբը այս մասին եր- կար քննութիւն ընելէն ետքը՝ կը կարծէ որ չը սխալիր հաստատելով թէ հոս ամենեւին ան- հատին իրաւունքը վիրաւորեալ չ'է եւ իրա-ւունք ու պարտք վայելչապէս իրար դրկած են. ուստի խնդիրը պարզ եւ գործածութիւնը նոյնպէս պարզ տեսնելով եւ Ազգին աւելի օգ- տակար ու արդիւնաւոր, որովհետեւ ընտրողաց ձեռնհասութեան աւելի բարոյական երաշխա-ւորութիւն կայ, կը յուսայ որ ժողովին հաւա- նութիւնը կ'ըստանայ այս մասին:

2. — Ընտրութիւն Եկեղեցւոյն Երեսփոխանաց. երկրորդ անտեղութիւն մը եկեղեցականաց ընտ- րութեան մէջ դիտվեցաւ. ասոնք մինչեւ ցարդ եկեղեցական դասին կողմէն կ'ընտրվէին իրրեւ անոր ներկայացուցչիչը. այս սովորութիւնը ան- կանոն ժամանակի յետին օրերէն մնացորդ մըն է, երբ ազգայն կողմած ժողովներու մէջ ժո- ղովորդը արհեստաւորաց դատերովը կը ներկա- յանար եւ ժողովները դաս կը ներկայացնէին եւ ոչ ազգ: Երեսփոխանական դրութիւնը Յան- մանադրապէս ծնած օրէն քանդեց զայդ սովո- րութիւնը, պահելով երեսփոխանաց կարգին մէջ միայն եկեղեցական անդամները՝ բայց ոչ իբ-րեւ ներկայացուցչիչ նոյն դասին, այլ կրօնա- կան խնդրոց մէջ անոնց մասնաւոր ձեռնհասու- թեան օժանդակութեանը ակնուհեւով. որով- հետեւ ազգային խնդրոց շատը խառն է եւ լոկ աշխարհական երեւցածներն իսկ քիչ շատ հե- աւոր յարաբերութիւն ունին կրօնականի, եւ ըստ որում մեր ժողովներն ի սկզբանէ խառն ե- ղած են այս պատճառով:

Յանձնադրութիւնը որ Ազգին մէջ ընտրողներ եւ ընտրելիներ միայն կը տեսնէ եւ երբէք դաս- սեր, երբ եկեղեցական անդամ կը պահանջէ ժողովին մէջ, չ'է թէ անոնց դասին կը դիմէ ներկայացուցչիչ խնդրելու համար, ալ միշտ ազ- գային ընտրողաց դիմելով՝ ասոնց կը պատուի- րէ որ քրէթներուն մէկ մասն ալ այս ինչ յատ- կութեան տէր ընտրելեաց վրայ տանին եւ այս թիւ երեսփոխան ալ յատկապէս այդպիսեացմէ առնուն. եւ ասի միշտ՝ ձեռնհասութեան միակ նպատակով:

Եթէ ասանկ չ'ըլլար, եկեղեցականք իրենց դասին միայն ներկայացուցիչն ըլլային եւ ոչ ազ- գին, եկեղեցական խնդրոցմէ դուրս ձայն պէտք չ'էր որ ունենային, նոյնպէս եւ աշխարհականք:

իրրեւ աշխարհականաց միայն ներկայացուցիչ՝ կրօնական խնդրոց մէջ ձայն չ'էին ունենար . եւ ժողովը երկուքի բաժնով՝ ազգային խնդրոց մէջ որք խառն են ըստ մեծի մասին , էակ մը կը դառնար երկամարմին՝ կոնակ կանգնի վակամ՝ որ ոչ առաջ եւ ոչ ետ կրնայ շարժիլ , քաշկոտեալ անդուլ ի հակակոյս :

Բայց ոչ , ոչ , չ'է այդպէս . Ազգային ժողովին մէջ դաս ներկայացնող չը կայ . Սահմանադրութիւնը հոն Ազգային երեսփոխաններէ զատ մարդ չը ձանչեր . անոր անդամները ամենքն ալ հաւասարապէս զԱզգը կը ներկայացնեն եւ համազօր իշխանութեամբ որոշողական ձայն ունին ազգային ամեն խնդրոց մէջ :

Ահա ասոր համար եւ մանաւանդ՝ որպէս զի ստի իրաւապէս ալ այսպէս եղած ըլլայ , պէտք է որ անդամոց ամենքն ալ ազգային երեսփոխանի հարազատ դէմք ունենան , այսինքն միօրինակ զօրութենէ յառաջ դան , համամասն ազգիւրէ այսինքն միօրինակ ընտրութենէ :

Աւստի զայս ըրաւ Ա. երաքննիչ Յանձնախումբը՝ եկեղեցականաց ընտրութիւնը՝ աշխարհականաց ընտրութեան նմանցնելով , եւ յանձնելով անոնց ընտրութիւնն ալ՝ ասոնց պէս՝ ժողովըրդային ժողովոց որք են թաղական ժողովք :

Եւ զարձեալ այլ զխտակեալով մը՝ նայվեցաւ խնդիրը , հաւասարութեան սկզբան ուղղակետովը . թէ արդեօք եկեղեցականաց ընտրութեան այս մեկնաշորքը պատճառ մ'ունէր բացառութեան որ կը խուսափէր մեր տեսութենէն : Այս զննութեան մէջ սա հանրաձայնօթ ու անժխտեցեալ կեան ելաւ դիմաց՝ թէ աշխարհականէ կը տարբերի եկեղեցականը սրբազան խորհրդոց մատակարարութեան մէջ ուր ձեռն աշխարհական չը մխրառանց ամբարշտութեան , եւ եկեղեցական այնպիսի ժողովներու մէջ որ հաւատոյ մասանց եւ դաւանութեանց քննութեանը յատկացեալ են ուր աշխարհական հեղինակութեան հասարակօրէն չը կայ տեղ . իսկ այսպիսի ժողովներէ եւ նուիրական խորհրդատուէն դուրս , եւ սրբարար սեղանէն վար իջածին պէս՝ հայ քահանան կը խառնվի հայ ժողովուրդին մէջ մի եւ նոյն իրաւամբք ու պարտեօք , եւ մի եւ նոյն ընկերական յարաբերութեամբ ու ընտանեկան օգուտներով կը շփթի անոր հետ իրրեւ անհատ ազգային : Այո , իրրեւ պաշտօնեայ հոգեւոր՝ աշխարհականին բոլոր յարգանացն ու պատկառանացը միշտ եւ ամենուրեք իրաւունք ունի եկեղեցականին իր անձնական արժանապատուութեամբը , բայց իրրեւ անհատ ազգային՝ արդա-

րութեան սկզբան առջեւ հաւասարապէս կը խոնարհի աշխարհականին հետ , եւ հետեւաբար մեր ազգային ժողովներու մէջ՝ ուր ոչ սրբազան խորհրդոց՝ այլ ազգային զործոց մատակարարութիւն կայ , ուր ոչ հաւատոյ մասանց՝ այլ ընկերական օգտոց քննութիւն կայ , եկեղեցական անդամը հաւասարակից է աշխարհականին . մի եւ նոյն ձայնն ունի ամեն խնդրոց մէջ եւ մի եւ նոյնուժը . Աւստի մի եւ նոյնկերպով ընտրվի է եկեղեցականին իրաւունքը , եւ մի եւ նոյն կերպով զանի ընտրել է ժողովուրդին պարտքը :

Աւստի անհիմ սովորութենէ մը զատ պատճառ չ'ունի եկեղեցականաց ընտրութեան այդ մեկնաշորքը որ հաւասարութեան սկզբան առջեւ ալ անա չը դատու չնոր :

Չեր Յանձնախումբը կը յուսայ որ Ազգային ժողովն ալ հաւասարութեան սկզբանց անհամաձայն չը տեսներ զայս փոփոխութիւնը , եւ կը հաւատայ մանաւանդ՝ որ այս պատճառաց համոզվող եկեղեցականք իրենց արդարաօրութեամբը իրենք իսկ՝ պիտի խնդրեն՝ որպէս համազօր իշխանութեամբ՝ նոյնպէս համամասն դէմքով բաղմիլ իրենց աթոռակցաց միջեւ . եւ ժողովուրդասէր եռանդով ին՝ ժողովուրդին ընտրեալն ըլլալու նախանձելի պատուոյն պիտի թիկնածեն (1) :

3. — Թէ- երեւի-եւանց . Աւրիչ փոփոխութիւն մը երեսփոխանաց 140 թիւին վրայ է , զոր Դրան Յանձնախումբը 70 ի իջուցած էր : Առջինը շատ է եւ ետքինը չափազանց քիչ : Յիրաւի թիւը իրաւունքի մը վրայ չ'իմնեալ չ'է , կամային է . ընտրողաց թիւին համեմատ կրնայ հազարէն մինչեւ մէկ միլիոնի վրայ մէկ երեսփոխան առնովիլ . եւ ըստ որում կամային է , ինչ հարկ որոշել թէ մեզի համար քանի հազարին մէկ երեսփոխան առնուլ պէտք է : Սակայն Ա. երաքննիչ Յանձնախումբը կը կարծէ որ՝ այս պատկառելի ժողովը ըստ արժանուոյն եւ ըստ բաւականին բովանդակ Ազգը ներկայացնելու համար , չը կրնայ երբէք 100 էն պակաս անդամով բաղկանալ . եւ մեր ազգային ժողովներու մէջ եկեղեցականաց ու աշխարհականաց ճիշտ եւ արդար համեմատութիւնը՝ էն շատ քիչ մէկ , եւ էն քիչ 6 ին մէկ պէտք է որ ըլլայ . ասկէ եւել կամ

(*) Տեղեկագիրը շտապով գրված ըլլալուն համար՝ Սահմանադրութեան մէջ քի փոխեալ այս կետը գլխավոր մտքով լած էր յետոյ , այս թիւին 100 քննելու հարկ տեսաւ Տեղեկագիրը :

պակասը չափազանցութիւն կ'ըլլայ իրարու վրայ . Աւստի երեսփոխանաց թիւը բանաւորապէս կամ 100 պիտի ըլլար՝ 20 եկեղեցական եւ 80 աշխարհականով , կամ 120՝ 20 եկեղեցական եւ 100 աշխարհականով (*) . զառաջինը բաւական կը կարծէ Յանձնախումբը :

4. — Բաց-մ յանձնախումբը : Այս գլխէն դուրս չ'ելա՞ծ՝ 43 յօդուածին վերջին պարբերութիւնը ձեր գիտողութեանը յաակապէս ենթարկել կը ցանկայ Յանձնախումբը : — Բ. Դունէն զրկված ծըրազրին մէջ ըսված է թէ՝ ժողովին ամեն առաջին բացմանը համար Բ. Դունէն հրաման առնովի ու յետոյ բացվի :

Յանձնախումբը կը կարծէ թէ զայս յօդուածը այս կերպով Ազգը չ'էր կրնար ընդունիլ առանց ցաւ կրելու իր հաւատարիմ հայատակութեան զգացմանցը մէջ . Ասի Դրան կողմէն անվստահութիւն կրնայ ենթադրել ազգային ժողովին ու Ազգին Պատրիարքին վրայ , որոնք իր վստահութեամբն ու հաւանութեամբը կարգեալ են . եւ չը կրնայ խորհովի որ ասոնք Տէրութեան անհաճոյ ընթացքի մը մէջ գտվին ընդհակառակը՝ ազգային ժողովոց գումարումները միշտ չընորհարարաւ զգացումներով են այն Տէրութեան համար՝ որոց չնորհիւր Ազգը կը վայելէ իր սահմանադրական վարչութիւնը եւ որում ամեն առիթներու մէջ իր երախտապարտութեան հաւատարիքը հոչակելու զանցառութիւն չ'է ըրած . եւ մանաւանդ նկատելով թէ ժողովին նիստերուն հրասարակային ըլլալը ինքնին ըստ ամենայնի բաւական երախտարութիւն է Կառավարութեան , Ազգը երբէք չը կրնար ընդունիլ իր վրայ այդպիսի կասկած : Իսկ ազգային վարչութիւնը քաղաքավարական փափուկ պարտ մ'ունի կատարելու , այն է՝ Բ. Դրան ծանօթութիւն միայն ալ ժողովին բացումն ու պատճառն իմացնելով . եւ այնուհետեւ ժողովը համարձակապէս կրնայ բացվիլ առանց հրաման սոցտելու : Աւստի

(*) 120 թիւն ալ երեսփոխանաց գտնակարգութիւնը չ'էր կրնար տարել ստույգ միշտ 5 դասի բաժանեալ կը մը . նոյնի՝ եկեղեցական գասը 20 ստոր . եւ աշխարհական 4 դասերը 25 պակաս . քանզի որ եւ ըլլայ աշխարհականաց թիւը՝ միշտ երկու հաւասար բաժին ընելու է . կէտը՝ օրի է կէտը գաւառաց օտարով , ե իւրաքանչիւր կէտը հաւասարապէս երկուքի բաժանելու ըստ ընական բաժանման թաղից ու գաւառաց (տե՛ս 41 յօդ . Սահմ .) : — Այն ատեն գաւառական ժողովներն ալ սոյն համեմատութեան հեւ տեւիլ կը պարտելին 60 անգամով՝ որոց 10ը եկեղեցական է 50ը աշխարհական , ե նոյն զատակարգութեամբ :

այս պարբերութիւնն ալ սոյն իմաստին համեմատ սրբազրկեցաւ :

5. — Ա. երեսփոխում յանձնախումբը : Ընդհանուր ժողովին քանի մը տարուոյ վերջը ամբողջակի լուծու՞մը զոր կ'առաջարկէ Դրան Յանձնախումբը , մերժեց ի սպառ Չեր Յանձնախումբը՝ անտեղութիւններ նախատեսելով այն կերպին մէջ , եւ Չ տարին անգամ մը մէկ հինգերորդով մասնակի եւ դասական վերանորոգու՞մը նախամեծար համարեց ուրիշ որ եւ է կերպիլ նկատելով նախ թէ սոյնկերպով ժողովականաց մեծ մասը միշտ ներկայ իրրեւ ականջալուր վկայք անցելոյն՝ ոչ սակաւ կ'օգնեն իրենց փորձառութեամբը նորեկները լուսաւորելու ազգային խնդրոց ընթացքին մէջ : Երկրորդ՝ թէ սոյն կերպով Ազգային ժողովը միշտ մնայուն կը շարունակէ անընդհատ իր ընթացքը , եւ Ազգը ոչ մէկ ատեն առանց երեսփոխանութեան մնալու պատահական փորձանքին տակ կը գտվի :

Այս երկու անհուն բարեմասնութիւնքը հրգոր պատճառներ են որք նախապատուութիւնը միշտ մասնակի վերանորոգման կերպին տալ կու տան :

6. — Տարբերութեան ընդ մէջ յանձնախումբը՝ չէ թէ նոր բան մ'ըրած ըլլալու համար , այլ պաշտօնին մէջ ալ շփոթութեան տեղի չընձգելու համար՝ յանձնախումբը բառերուն նշանակութիւնը ճշտեց , եւ առաջուց կրօնական եւ քաղաքական ժողով կոչվածները իւր-իւր անուանեց : Նկատելով թէ ժողով ըսվածը միշտ համարառու , գատող , վճռող , հրարամայող մարմին մըն է՝ առանց մատակարար ու գործադիր ըլլալու . մինչդեռ խորհուրդ ըսվածը ասոնց հետ մէկտեղ եւ գլխաւորապէս մատակարար ու գործադիր է : ժողովները իրենց ընտրած խորհուրդներուն համարառու , եւ խորհուրդները զիրենք ընտրող ժողովներուն համարառու :

Խորհուրդները յատուկ մասնախորհուրդներու բաժնելու հարկաւորութիւնը անհրաժեշտ համարվեցաւ , ըստ յատուկ բաժանման իրենց պաշտօնին մասանց , որոց ամեն մէկ ճիւղը յատուկ ձեռնհասութիւն կը պահանջէր : Այս բաժանման ու կազմակերպութեան մեքենան պարզ ու յատակ կը տեսվի խորհրդոց վերաբերեալ յօդուածոց մէջ որք անկարօտ են մեկնութեան :

7. — Հանգամանք Պատրիարքի վերաբերեալ 3 յօդուածին առաջին պարբերութեան մէջ , ուր ըսված է՝ «Պատրիարքը Օսման

ցի Հայոց պաշտօնական հոգեւոր պեան է» աւելցուցինք՝ « իբրև ներկայացուցիչ կաթողիկոսին ամենայն Հայոց » բառերը: Առանց այս սրբազրութեան բանը սխալ՝ ուստի եւ խօսքը թերի էր, վասն զի Պատրիարքը՝ Օսմանցի Հայոց, կաթողիկոսը՝ Ռուսացի հայոց, Երուսաղէմայ Պատրիարքը՝ Ափրիկեցի հայոց, եւ առաջնորդները՝ գաւառացուց հոգեւոր պետը չ'են: Ազգը շատ մը հոգեւոր գլուխներ չ'ունի, այլ ամենայն հայոց միակ հոգեւոր գերագոյն Պետը Աբարատեան մայր աթոռոյ գահակալն է, եթէ Պատրիարքը Օսմանցի հայոց պետ կը նկատուի՝ փոխանորդաբար կաթողիկոսին է, եթէ առաջնորդները գաւառացուց հոգեւոր պեան են՝ փոխանորդաբար Պատրիարքին են, որ կաթողիկոսին ներկայացուցիչը կը համարուի կայսերական հոգին վրայ: ուստի կաթողիկոսն է դարձեալ բոլոր ազգին եւ ամեն տեղի հայոց միակ հոգեւոր Պետը, եւ Պատրիարքները զանի հոգեւորապէս կը ներկայացնեն իրենց գանձած տեղերը: Ռուստի եթէ այս սրբազրութիւնը չ'ըլլայ, Օսմանցի հայերը Մայր աթոռին հոգեւոր պետութիւնը ժխտած կը թըլին:

Նմանապէս 4րդ յօդուածին երկրորդ սարբերութեան ետքը՝ աս պարբերութիւնը աւելցնել յարմար գատեցինք իբրև հետեւանք վերոյիշեալ յօդուածին: Առկիւնը կայսերական հրովարտական կը հաստատէ Պատրիարքին ընտրութիւնը, եւ կաթողիկոսն իր Առաքելական օրհնարներ կանգնողը զանի կը նուիրագործէ:

Ասի դարձեալ փափուկ քաղաքավարութեան պարտ մըն է ազգային Վարչութեան կողմէն առ Սրբազան կաթողիկոսը. երբ Վարչութիւնը Ազգին նոր պատրիարք մը հաստատէ, վայելուչ է որ ամենայն հայոց կաթողիկոսին ծանօթութիւն տայ եւ անոր օրհնութիւնը խնդրէ. ասի քաղաքականապէս վաւերացում ըսել չ'է ամենեւին նորընտիր Պատրիարքին ընտրութեան, այլ հոգեւոր հաճոյացում մը որ անհրաժեշտ պայման չ'ենթադրեր: Ազգը կ'ընտրէ, աշխարհական պետը կը հաստատէ, հոգեւոր պետը կ'օրհնէ: Ինչ աւելի բնական քան դայս, Այս քաղաքավար սովորութիւնը առաջուց կար, բայց որ եւ է քաղաքական նկատումներով դուցէ խափանվեր է. իսկ այսօր պատճառ մը չը կայ այս ըստ ամենայնի անլիսա եւ սոսկ հոգեւոր ու բարեկամական յարաբերութիւնը կարելու մայր Աթոռին ու Պատրիարքարանին մէջ, կը տեսնենք որ Սահմանադրութիւնը տեղ տեղ հոգեւոր խնդրոց համար մայր Աթոռին ձեռն-

հասութեանը կը դիմէ. գործոց յարաբերութիւնը կարկած չ'ըլլալէն ետքը՝ քաղաքավարական յարաբերութիւնը պարտ կը մնայ Վարչութեան: Եւ այս ձեւով ալ ետքի օրերս կաթողիկոսին յայտնել ուղած պահանջմանց կարելի հատուցումը Ազգը ըրած կը սեպոյի:

8. — *Թըրքմէն հարաբերութիւն*. Այս մատակարարութիւնը մինչեւ այսօր անճոռնի վիճակի մը մէջ է. մատակարար խորհուրդ մը կայ, համարառու չ'ունի. կեդրոնական խորհուրդները անկէ համար պահանջելու իրաւունք չունին, ընտրօղն իրենք չ'են, թաղին ծախքը վճարօղն իրենք չ'են: Այս իրաւունքը թաղեցւոցն է՝ ուրնք ընտրող ու հանգանակող են, բայց թաղեցիք առանձին առանձին անհատներ են, կերպարանեալ եւ պաշտօնապէս ներկայացեալ մարմին մը չ'են, ուստի ուր տեսված եւ ինչպէս կարելի է որ հարիւրաւոր կամ հազարաւոր անհատներ մէկտէզ գալով կանոնաւոր եւ օրինաւոր հաշիւ առնեն:

Վերաքննիչ Յանձնախումբը տեսաւ որ ասի ամենամեծ թերութիւն մըն էր, թաղական մատակարարութիւնը ձեռք մըն էր որ կը գործէր առանց գլխի, վերջապէս հրէշ մը անզուխ: Ռուստի փութաց զայն գլուխը տեղը բերել, ու հաստատեց թաղական ժողովները՝ ընտրող եւ համարառու թաղական մատակարարութեանց, եւ վերջապէս ըստ ամենայնի՝ թաղը ներկայացնող մարմին մը որ ում կ'ընկնի նաեւ ամենայն իրաւամբ թաղէն ուղղված ազգային երեսփոխանաց ընտրութիւնը, վասն զի պաշտօնապէս թաղը կը ներկայացնէ, եւ թաղին ընդհանուր գործոց հոգը՝ թաղեցուց կողմէն իրեն յանձնեալ իրաւունքն է:

9. — *Ազգային հանգանակութիւն*. Ազգային այս մեծ խնդիրը բաւական եւ շատուց ի վեր ձեռված է Ընդհանուր ժողովին առջեւ, բայց միշտ ապարդիւն ելած է իր պայքարներէն:

Ձեր Յանձնախումբը՝ այս խնդրին օրէնսդրական մասը հանդերձ իր ընդհանուր սկզբունքովը ամփոփ ու համառօտ բովանդակելով, եւ սրտի մտօք քննել ու խնդրին թերն ու գէմը ամենայն զգուշութեամբ կշռադատելէն ետքը, վերջապէս համոզված է՝ թէ Ազգին արդի վիճակին յարմար առայժմ ասկէ արդար եւ ասկէ դիւրին միջոց չը կայ եւ չ'է գտած: Գրան Յանձնախումբն իսկ համոզված կ'երևուայ թէ ստորագրութեան միջոցէն աւելի բանաւոր միջոց չը կայ առ այժմ հանգանակութեան:

Ռուստի Ձեր Յանձնախումբը յատկապէս կ'ա-

ռաջարկէ որ՝ այս խնդրին համար վիճարանութեան կորուսված ժամանակները բաւական համարելով՝ առ այժմ այս միջոցով ձեռնարկութիւն ըլլայ գործին, եւ մէջ մը գոնէ հաստատված ըլլայ օրինաւոր հանգանակութիւնը. ետքերը փորձը կրնայ ցուցնել թէ ինչ եւ ուր փոփոխելի կետեր կան:

10. — *Բարձրագոյն վերահսկում*. Գլխաւոր փոփոխութիւն մը առեւնական օրինաց մէջ՝ առանց մեծագոյն մասի սպասելու առեւն բանալու խընդիրն է: Այս կետը դժբաղդապէս շատ մը թանկագին փորձերով իմացուց մեզի թէ ինչ անտեղութիւններ կան մեծագոյն մասի ըսպասելու մէջ:

Ձեր Յանձնախումբը համոզված է՝ թէ այս խնդիրն ալ առանց բնաւ իրաւունքը վիճարկելու, իր արժանի բարեձեւութիւնը գտած է 93 յօդուածին եւ անոր ծանօթութեանը մէջ:

11. — *Գաւառական վարչութեան գլխին մէջ ըսելիք չը կայ*. ասի կեդրոնական վարչութեան վրայ ձեւեալ է եւ ըստ այն կը վարվի ամենեւին, միայն թէ անգամոց թիւը՝ որ միշտ եւ մինչեւ հիմայ անորոշ էր մընացած, որոշել հարկաւոր դատեց Յանձնախումբը, եւ Ընդհանուր ժողովին համեմատութեամբ որն որ 100 անգամ ունի, 50՝ գաւառական ժողովոց յարմար համարեց, եւ 25՝ թեմական եւ թաղական ժողովոց:

12. — *Վերահսկում*. Այս գլխին մէջ փոփոխելիք չը կայ, այլ միայն կրկնել ու կրկին հաստատել ինչ որ ըսված է նախկին Սահմանադրութեանց մէջ: Թէ Սահմանադրութեան հիմնական սկզբունքն անփոփոխելի են, ըսել է անվերաքննելի. Սահմանադրութեան պատուանդանքը անոնց վրայ յեցեալ են անոնց դպչիլը Սահմանադրութիւնը կործանելու երնել է: Ոչ միայն վերաքննիչը կարող չ'են, այլ Ազգն անգամ չ'ունի իրաւունք զանոնք այլայլելու, զի արդարութեան սկզբունք են անոնք, զի անոնց ապահոված իրաւունքները պարտք են միանգամայն. եթէ սոսկ իրաւունք ըլլային, մարդ ազատ է իր իրաւունքն ըստ կամաց տնօրինել նաեւ իսկ բոլորովին ձեռնթափ ըլլալ ու անկէ մէկդի դնել իսկ պարտքը չը տնօրինվիր ուրիշ կերպով. պարտքէ ազատելու համար՝ ամբողջապէս զանի վրձարել հարկ է:

Այս հիմնական սկզբունքը Սահմանադրութեան յօդուածներէն դուրս են, եւ առանձին՝ իբրև գլուխ եւ հիմն անկեան Սահմանադրութեան ձակատը զրված՝ անոր յօդուածոց կը նա-

խազահեն: Եւսկ ընադրին օրինական յօդուածները՝ որք նոյն սկզբանց ոգւովը թափանցեալ պէտք է որ ըլլան եւ ընդ այս պէտք է որ ձրգտի օրէնսդրին ջանքը, անոնք միայն վերաքննելի են տարիներու փորձառութեանէն ետքը, եւ ան ալ եթէ այն ատեն Ազգային ժողովը վերաքննութեան հարկը ցուցնէ վերաքննելի յօդուածները նշանակելով:

Այս օրինական յօդուածները Սահմանադրութեան ընադրին մէջ ի հարկէ չ'են կրնար պարունակել գործադրական բոլոր մանրամաստեքը. Ընդհանուր ժողովը կամ Վարչութիւնը մասնաւոր կանոններ ու հրահանգներ կը պատրաստէ զորս ըստ հարկին եւ ըստ տեղեւոյն կրնայ փոփոխել իբրև գործադրական միջոց օրինական տրամադրութեանց:

Վերաքննիչ Յանձնախումբը՝ (որ 7 ձեռնհաս անդամներէ պէտք է բաղկանայ, 1 եպիսկոպոս, 1 քահանայ եւ 5 աշխարհական), իրեն ցուցված յօդուածները պիտի քննէ գլխաւորապէս, եւ եթէ անոնցմէ դուրս կետերու դուչելու հարկ զգայ, ամենայն զգուշութեամբ պէտք է որ վարվի, եւ երբէք չը մոռնայ թէ հիմնական սկզբանց ոգւոյն հակառակ փոփոխութիւն երբէք ընդունելի չ'է Ազգին համար. եւ որ եւ է փոփոխութիւն պատճառաբանեալ պիտի ներկայացնէ Ազգային ժողովին:

Ձեր Յանձնախումբը այս նպատակով պատշաճ կը տեսնէ վերջին պարբերութիւն մ'ալ յաւելուլ վերաքննութեան յօդուածին, որով յաջորդ վերաքննիչը պարտաւորին պատճառաբանեալ տեղեկագրով ներկայացնել իրենց աշխատութիւնը, եւ նոյն տեղեկագրութիւնը՝ ժողովին վճիռն ըզգե՛նուլէն ետքը, կցորդեալ մընայ նոյն վերաքննեալ ընադրին. եւ ասի՝ երկու գլխաւոր օգտի համար՝ նախ՝ ի լուսաբանութիւն ընադրին, առանց որոյ՝ տեսինք փորձով թէ ինչ յօդուածներ ու բառեր ինչ այլեւայլ մեկնութեանց ու շփոթութեանց լ տեղի տուին, եւ մեր նիստերուն թանկագին ժամերը պարապ վէճերու ծախեցին. — Երկրորդ՝ զի մի յաջորդք կարենան այլայլել նախորդաց գործքը, առանց բանաւորապէս ջրելու անոնց ի մէջ բերած պատճառաբանութիւնքը. եւ վերջապէս՝ վերաքննութիւնք կարենան միշտ բաղդատվիլ, եւ զիրար լուսաւորելով՝ Սահմանադրութիւնը դէպ ի կատարելութիւն եւ Ազգը դէպ ի յառաջագիմութիւն դիւրաւ կարենան հարթել ընթանալու շաւիղը:

Այս ազգոգուտ պատճառները կ'ապահովեն ձեր Յանձնախումբը թէ այս պարբերութիւնն ալ պիտի գտնէ շնորհ Ազգային ժողովին խոնահան հեռահաղթեանն առջև :

Աւասիկ այն վերջին պարբերութիւնը . — «Վերաքննիչ Յանձնախումբը պատճառաբանեալ տեղեկագրով մը պէտք է ներկայացնէ ըզ վերաքննութիւնը, ընդ որ Կցորդեալ պիտի մնայ նոյն տեղեկագրութիւնը՝ ժողովին հաւանութիւնն զգենուէն ետքը, թէ ի լուսարանութիւն բնագրին եւ թէ զի մի յաջորդք կարենան այլայլել նախորդաց գործքը առանց դորաւորագոյն պատճառի » :

Վանձնագրութեան այս վերջին գլուխէն գուրս չ'ելլած՝ սայալ չը մտնանք յիշելու թէ ազգովին ընդունուած Վանձնագրութիւնը Ազգին որոշ ու յայանի կամքը կը տեսնուի . դանի չը յարողը ազգատեսաց կը համարվի . անոր գործադրութեանը անոզ կեցող կամ անոր հակառակը գործող պաշտօնեայն յանցաւոր է եւ պատասխանատու համարէն Ազգին առջև :

Սոյն գիտումէն ներշնչեալ է նաեւ վերաքննութեան յօդուածին առաջին պարբերութիւնը : (*)

ՎԵՐՋԱՄԱՆ

Փոխիտելու արժան գատուած գլխաւոր կետերուն վրայ այս մասնաւոր ու համառօտ տեղեկութիւնը տալէն ետքը՝ Վերաքննիչ Յանձնախումբը իր աշխատութիւնն աւարտած համարելով, սա հետեւեալ երկու գլխաւոր առաջարկութիւններով կը կնքէ իր տեղեկագիրը .

1. ԱՅԱԾԱԿՆԵՐՈՒԹՅՈՒՆ . — Նախ կ'առաջարկէ որ թաղական մատակարարութեան գլուխը՝ իբր ըստիւղական խնդիր ամենէն առաջ ընդունի ընդհանուր ժողովը եւ հիմակվրնէ արտօնութիւն տայ Վարչութեան որ թաղական ժողովներուն կազմութեան հրահանգը զրկէ թաղական խորհրդոց . նկատելով թէ այս թերութիւնը տեսուած ժամէն աններելի է բաց թողուլ վասն զի ասի ազգային ամեն գործողութեանց հիմն ու աղբիւրն է . նկատելով դարձեալ թէ թաղական մատակարարութեան պարագաները ամենեւին Բ. Գրան ուշադրութիւնը չ'են կրնար դրաւել . ասի բուն խիստ ազգին ներքին եւ զբռնելէ ընտանեկան պարզ մէկ գործն է, իբրեւ Եկեղեցւոյ մէջ ըլլալիք գործողութիւն մը, եկեղեցւոյ եւ դպրոցի վերաբերեալ սոսկ մատակարարութիւն մը . ինչ կերպով ալ ըլլայ՝ կառավարութեան հոգ չ'է :

(*) Տես 2 թիւին ծանօթութիւնը էրէն (22) . նոյն պատճառն է եւ հոս .

2. ԵՐԿՐՈՐԴԿԱՆ ԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ . — Վերաքննիչ Յանձնախումբը կ'առաջարկէ որ Ազգային ժողովն իր իմաստուն դիտողութիւններովը անոր թերութիւնները լցնելով, օր մը առաջ եւ ամբողջապէս ընդունի դայս երկրորդ վերաքննութիւնը եւ տայ անոր իւր գերագոյն հեղինակութիւնը . նկատելով որ նախնի Վանձնագրութեանց հետ բազմաթիւ, 10 տարւոյ մէջ քիչ յառաջդիմութիւն չ'է ըրած այս նորը, թէ դատարաններու մասին եւ թէ գործադրական մասին . ուր ամեն իրաւունք ու պարտիք ըստ կարի տեղերին գտած իրարու հաշտ ու համաձայն ներգաշնակութեան մէջ կը թուին . ուր սահմանադրական Վարչութեան կազմաւորութիւնը բաւական գոհացուցիչ կերպարան մ'առած կ'երեւայ :

Չեր Յանձնախումբը չ'է երբէք մտքէն անցուցած թէ այս վերաքննութիւնը թերութիւններ չ'ունի, հեռի իրմէ այդ յաւակնութիւնը . ընդհակառակը՝ համողութեամբ է որ դեռ շատ բարեօրէնութիւններ ու գործադրական դիւրին միջոցներ կան ու պիտի յառաջ գան, եւ մենէ ետքը եկողները մեր շատ թերութիւնները պիտի լցնեն . եւ վերաքննութեանէ ի վերաքննութիւն անցնելով՝ ժամանակին ու գաղափարաց յեղաշրջութեանը հետ պիտի կատարելագործուի, եւ վերջապէս պիտի կարենայ օր մը այս սահմանադրութիւնը՝ ազգային ղեղձմանց բարձիչն

ու բարեկարգութեանց միջնորդն ըլլալ . ազգային բարոյական ու մտաւորական յառաջդիմութեանց ցանկալի առաջնորդն ու ազգին սիրելի օրէնդիրքը հանդիսանալ : Ա՛յ է Ազգին եւ ամենուս ակնկալութիւնը, եւ զայս տիրակալութիւնը Ազգն իր երեսփոխան ժողովին վրայ դրած է, եւ անոր պիտի պարտի դայս շնորհը : Այո, Ձեզի, Երեսփոխան էֆէնտիներ, որ այնքան երկամբ ծնայ Սահմանադրութիւնն ու դանի այնքան խնամով շրջապատեցիք, եւ միանդամայն կայսերական կառավարութեան որ շնորհ ըրաւ անոր կեանք պարզեցուցուց :

ԲՆՅԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԵՓԷՆՈՒՄԻՆ . — Պիտի տեսնէ ժողովը որ ասոնցմով կը մտնէ խնդրոյն խորը . եւ շարունակեց ընթերցումը :

ԲՆԹԵՐԿՄԱՆ ՄԻՋՈՅԻՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖԷՆՈՒՄԻՆ . — Վերաքննիչ Յանձնախումբը Կարգադէմ թաղական հաստատութեանը կարօտ է՝ ժամանակին ու փորձին յանձնելով անոր թերութեանց ուղղութիւնը, մանաւանդ խնդիր մը որ յաւիտեան կրնայ ազգին անդին քաշկռատիլ, եւ որ ոչ մէկ ընկերութեան մէջ կրցած է դեռ այսօր հասնիլ ամենակատար դրութեան մը :

ՉԵ ՆՈՒՄԱՆԱԿԵՐԱՎԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՅՎԻՈՐ ԵՎԻՈՐ ԵՎԻՈՐ ԵՎԻՈՐ

Ընթերցման աւարտելէն ետքը՝ Ատենապետ Էֆէնտին միջանկեալ կերպով յայտնեց որ եթէ տեղեկագիրը գրված չ'ըլլար, պիտի ստիպվէր հրաւիրել ըզտեղեկագրերը խնդրէն գուրս դանուած խօսքերը չըզբուցելու :

ԲՈՒՄԻՆԵԱՆ ԷՖ . — Պիտի տեսնէ ժողովը որ ասոնցմով կը մտնէ խնդրոյն խորը . եւ շարունակեց ընթերցումը :

ԲՆԹԵՐԿՄԱՆ ԱՐԽԻՍՏԱՆ ԷՖ . — Ռուսիեան էֆէնտիին կարդացած տեղեկագիրն իմաստուն խորհրդածութիւններով լի է, կ'առաջարկեմ որ ժողովը շնորհակալութեան քրէն տայ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ . — Այդ առաջարկութեան կարգը դեռ եկած չ'է, եւ պէտք է որ վերաքննութեան նիստերուն աւարտմանը մնայ :

ԲՈՒՄԻՆԵԱՆ ԷՖ . — Ե՛ս շնորհակալ եմ յատկապէս առաջարկող Էֆէնտիին յայտնած բարեյօժարական զգացումէն, բայց Յանձնախումբին ըրածն ուրիշ բան չ'է, այլ միայն իր պարտականութիւնը կատարած է, ասոր համար շնորհակալութեան իրաւունք մը չ'ունի :

ԽՆԻՐ ՍՍԱՅ ԵՒ ԱԳՅԱՄԱՐԱՅ ԿԱՌԱՂՎԻԿՈՍՈՒԹԵԱՆՑ

Սոյն կաթողիկոսութեանց խնդրոյն վրայ ժողովը լուսաւորելու համար Ատենապետ Էֆէնտին հրաւիրեց Քաղ. ժողովոյ Ատենապետը, պէտք եղած տեղեկութիւնները տալու :

Յայտնի է թէ Սոյն Նիկողայոս Եպիսկոպոսի ինքնութիւնը կաթողիկոսութիւնը ապօրինաւոր եւ անվաւեր վճռելէ ետքը, Նիկողայոս Եպիսկոպոս Պօլիս բերվելով՝ եւ ժամանակ մը հոս մնալով, Բ. Գրան հրամանաւ առանց վարչութեան հրամանին դարձեալ իր տեղը զբրկուեր էր, կաթողիկոսութեան խնդիրն առկա մնալու պայմանաւ մինչեւ զնոր անօրէնութիւն Ազգ. Պատրիարքարանի : Սակայն նա այս պայմանին հակառակ Ազգին ընտրած տեղապահ Սոյ վանքէն վրնտելով կաթողիկոսական պաշտօն վարելու ձեռնամուխ եղեր եւ մինչեւ իսկ քանի մը Եպիսկոպոսներ ձեռնադրելու համարձակեր էր . որով Սոյ վիճակին մէջ խռովութիւնը հետզհետէ կը սաստկանար :

Քաղ. ժողովը իրաց այս ցաւալի վիճակին վերջ տալու համար քանի մը անօրէնութիւններ ըրած է, որք են :

1. Նիկողայոս Եպիսկոպոսը Վիսէն հեռացնելու համար Բ. Գրան թագրիր գրուած եւ արդէն Բ. Գուրը ընդունելով կայսերական հաւանութեան յանձնած է :

2. Տիրականակերտի Առաջնորդ Յակոբ Եպիսկոպոս՝ Սոյ կաթողիկոսական Տեղապահ ընտրուած է մինչեւ ցընարութիւն նոր կաթողիկոսի :

3. Նիկողայոս Եպիսկոպոսի հեռանալէն ետեւ, անմիջապէս Եպիսկոպոս մը պիտի զրկուի Սոյ թեմերը, երեք կաթողիկոսական ընտրելի որոշել տալու այն տեղի եկեղեցականաց եւ ժողովրդոց ձեռօք եւ անոնց ցուցակը վարչութեան զրկելու համար, որպէս զի Ազգային ընդհ. ժողովն ալ նոյն երեք ընտրելեաց մէջէն մէկն ընտրէ կաթողիկոս Սոյ :

4. Նիկողայոսի ձեռնադրած ապօրինաւոր Եպիսկոպոսներէն մէկը, Դաւիթ Ներշապուհ անուն վարդապետը, Սոյ վիճակները խռովութեան մէջ ձգած ըլլալուն համար, թագրիր գրով մը զանի կիրարկուի վանքը փոխադրել տալու, եւ արդէն հեռադրական հրամանագիր զրկուած է յԱտանա :

ԿԻՍԻՆԻԵԿԻՐՏԱՆ-ՌՈՒՒԵՆ ԷՖ . Այս խնդիրը ըստ իս թեմէն չ'է լուծելը, եթէ լրջաբար խորհելու ըլլածը՝ մեր առջև մէկ քանի գծուարութիւնք պիտի ծագին :

Նախ քանի որ Տաճկաստանի Հայոց ամենամեծ մասը Էջմիածնայ թեմական են, եւ մենք ալ անոր թեմականն եղող Հայ ժողովուրդը կը ներկայացնենք, ինչպէս կրնամք ընդհանրական կաթողիկոսին կամքը չ'հասկնալ կամ անոր իրա-

ԵՌՄՈՒՑԵԱՆ-Տ. ԷՖ . — Արդէն ժողովոյդ

ւատութեանը արատ չ'ընդունելով ինքնիրեննուս երկու կաթողիկոսաց ընտրութեանը մասնակից ըլլալ, քանի որ Էջմիածին գիրենք ապստամբ եւ հակաթող կը ճանչնայ :

Երկրորդ՝ այս կաթողիկոսները քանի որ իրենց իրաւատութիւնը թեմական են եւ ոչ ընդհանրական, իրաւունք կրնանք ունենալ առանց թեմական ժողովրդոց կամքը հասկնալու մեր ուղած եպիսկոպոսներէն մէկը իրենց կաթողիկոս ընտրել, ասանկ որոշում մը նոյն իսկ մեր ընդունած օրէնքին գէժ չէ մի :

Այս խնդիրն աւելի եկեղեցականաց կը պատկանի, մեզմէ աւելի անոնք պէտք էին դատախազ ըլլալ, բայց չեմ գիտեր ինչու անտարբեր կը կենան, այս անտարբերութիւնը մինչեւ որ պիտի տանի զմեզ : մեր Պատմութիւնը կարգացած առանձնիս կը տեսնեմք թէ մեր ազգային կենսական խնդիրներու մէջ ամենեն աւելի եկեղեցականք ակոյցեան եւ պաշտպան հանդիսացած են, նոյն իսկ պատմութիւննիս անոնց կը պարտիմք : արդ քանի որ մեր գեղարդութենէն (բացառութիւնները մէկզի թողլով) մեր եկեղեցականաց մեծ մասը կամ տղիտարար եւ կամ անհողարար չ'են ուղեր իրենց սուրբ կոչմանը արժանի մեր ազգային իրաւունքները պաշտպանել՝ ալ գործը ամենուս է մնացեր : ուստի իրբեւ Երեսփոխան ընդգէժ իմ տկարութեանս՝ պարտ անձին կը համարիմ իմ գիտողութիւններս ընել այս մասին, յուսամ թէ իմ մեծապատիւ պաշտօնակիցներու հաճելի դայ եւ համակարծիք գտնուին ինձ :

Նախ եւ առաջ կ'ուզեմ քիչ մը Էջմիածնայ վրայ խօսիլ, Էջմիածնայ անունը բոլոր ճշմարիտ Հայու համար նուիրական է սուրբ, է :

« Ամեն կուսակցութիւնք եւ կիրք պէտք է որ այս անունը առջեւ անհետանան : Մեր նախնեաց փառքերէն ոչինչ ունիմք այսօր, մի միայն պարծենալու երկու բան մնացած են մեզի : եւ յիշուի պարծենալու ալ արժանի, որք են Երուսաղէմ եւ Էջմիածին, առաջինը՝ զուտ կրօնական, իսկ երկրորդը՝ կրօնական եւ ազգային : Էջմիածինով կը պարծիմք ըսի, որովհետեւ մեր նախնի փառաց նուիրական տաճարն է, այն հուշակաւոր տաճարն է եղած պատճառ մեր հայ անձանց ազգաց ցանկին մէջէն չ'արուելուն, ու չ'իմ ունկնդիրը կրնայ հասկնալ : բայց պիտի ըսուի թերեւս թէ այսօր այն ամենայն կերպիւ անկարող վիճակի մէջ է իւր իշխանութիւնը գործածելու մասին : այն այնպէս է, բայց ենթադրեմք թէ մայր մը ունենայինք օտարի քով ծառայութեան մէջ, եւ մենք ալ անկարող ըլ-

լայինք զայն ազատելու, միթէ որդիական պարտաւորութիւններնիս զլանալու էինք անկէց :

Մեր չահը, մեր պատիւը եւ նոյն իսկ մեր անձնութիւնը կը պահանջեն որ մենք այն աթոռին պատուանդանին տակը ամենայն հպատակութեամբ խոնարհինք, վասն զի առանց Էջմիածնայ ոչ հայութիւն կայ, եւ ոչ հայաստանաց եկեղեցի : թող ինք ունենայ անարժան Աթոռակալներ, անպիտան սպասաւորներ, ժամանակը ամեն բան կը շտկէ, միայն թէ մենք կամք ունենանք եւ աշխատինք ազգին մէջ ազգասէր, կրօնասէր եւ ուսումնասէր եկեղեցականներ յառաջ բերելու : բայց ինչ որ ընենք, միշտ մեր տեսութեան կետը բունենք Էջմիածինը, վասն զի այն է մեր լուսեղէն սրահը Անպատին մէջ : Գանք որ՝ ինչ պիտի կրնանք ընել մեր եկեղեցական անիշխանութենէն ծագած եւ մինչեւ մեզ հասած եւ աւելի գէշն է ազգին մէջ քար դայթակղութեան եղած երկու թեմական կաթողիկոսաց վիճակը : Ըստ իս ասոնք բոլորովին ջնջել զանազան պատճառներու համար չ'ըլլար, բայց անանկ ձեւ մը տալու է դործին, որպէս զի միանգամայն մենք Էջմիածնայ զաւակ ըլլալէն չը դադարինք, եւ Էջմիածնայ աթոռին գերագահութեանը արատ մը չը գալով այս կաթողիկոսները կանգուն կենան : Եւ կարծիքս այն է որ, մէկ կողմէն հոսկից անմիջապէս բանիբուն, անշահասէր եւ ազգասէր եկեղեցական մը գտնալու զրկելու է այն վիճակները, (ճամբու ծախքն ամեն երեսփոխան մէկ մէկ ոսկի վճարելով վասն ազգասիրութեան), որ երթայ ըստ Սահմանադրութեան հոն տեղի ժողովրդոց մեծագոյն մասին կամքը ստանայ եւ իրենց ազատ քուէարկութեամբը Երկու արժանաւոր ընտրելի ներկայացնէ մեզ մէկ տեղին համար՝ միւս տեղին համար ալ ըստ այնմ : միւս կողմէն Վեհափառ հայրապետին հետ Սրբազան Պատրիարքը բանակցութեան սկսելու է, իրեն մանրամասնաբար հաղորդելով այս կաթողիկոսութեանց չի կրնալ վերնալուն պատճառները, մեր Երեսփոխանական ժողովոյն որոշմունքը, այն կողմերը յատկապէս տեսուչ զրկուիլը, եւ հոն տեղի ժողովրդոց ազատ քուէովը երկու ընտրելի ներկայացնելը : Այն երկու ընտրելեաց մէջէն Վեհափառ հայրապետին թողլով, եւ գերագահութիւնը իրեն վերապահելով կրնայ երկու թեմական կաթողիկոսաց առանձնաշորհութեան պայմանները դնել ըստ եկեղեցական օրինաց : Այս ալ ազաչելու է նորին Սրբազանութենէն որ անանկ իրեն ամենախոնարհ ծա-

ռայ ընել տալու պէս բաներ չ'առաջագրէ, ինչու որ մեր հայաստանաց եկեղեցոյ ողբոյն բողոքովին դէմ է, այլ իրբեւ հաւասարապատիւ կաթողիկոս ճանչնայ զիրենք, միշտ գերագահութիւնը եւ բոլոր հայաստանաց եկեղեցոյ կառավարութիւնը իրեն պահելով : ասանկ ըլլայ նէ մեր եկեղեցոյն մէջ նոր բան մը մուտ գտած չ'ըլլար : Երբ նսխնիքներէն ունիմք բաւական օրինակներ, ինչպէս Աղուանից, Վրաց եւ այլն կաթողիկոսները որոնց ձեռնադրութիւնները հայաստանաց ընդհանուր հայրապետին ձեռքը կ'ըլլար : Ըստ իս ասկէց աւելի ազէկ միջոց չ'ըլլար : ասանկ ըլլալու ըլլայ՝ ան տեսնը երեք կաթողիկոսաց մէջ եղած հակառակութիւնները կը վերնան, եկեղեցոյ մէջ դասակարգութիւնը (հիերարչի) կը հաստատուի, եւ թէ ազգին առջեւ եւ թէ օտարի առջեւ դայթակղութեան առիթ չ'մնար, եւ մենք ալ գոնէ քիչ մը պարծենալու տեղի մը կ'ունենանք թէ մեր Երեսփոխանութեան օրովը ասանկ մեծ խնդիր մը լուծուեցաւ :

ՔԱՖԱՋԵԱՆ Ս. ԷՅ .— Արարատեան մայր աթոռին համար ամենքս իրբեւ հայ՝ միւսնոյն ըզգացումն ունինք, ինչ որ կ'իւսուցնէր Եֆէսն տին ունի, բայց իւր գիտողութեանց դալով քանի մը պատասխաններ ունիմ զորս Էջմիածնայ աթոռոյն խնդիրը յուզված ատենին պահելով, կը դառնամ այժմ երեք հարցում ուղղել առ Ատենագալիս Եֆէստին Քաղ . Ժողովոյ : Ա. Թէ ստոյգ է որ Նիկիոյցոս եպիսկոպոս Պօլիս գալէն ետեւ առանց վարչութեան հրամանին նորէն Վիս դարձաւ :

Բ. Թէ Ստոյ թեմական ժողովները պիտի ցուցնէ կաթողիկոսական ընտրելիները, թէ միայն միաբանութիւնը, ինչպէս որ Երուսաղէմայ միաբանութիւնը կ'ընէ իր պատրիարքական ընտրութեան ատենը :

Գ. Թէ քուէիցք ըրվանդակ արդիւնքը՝ հոս գալու է թէ միայն եթե ընտրելեաց ցուցակը ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ .— Պէտք չ'է որ անմիջապէս սոյն հարցմանց պատասխան տրվի վարչութեանէն : ատենաբանք կրնան խօսիլ ու շարունակել իրենց գիտողութիւնները, եւ լմնալէն վերջը ամենուն պատասխանը կուտայ վարչութիւնը :

Զ. ՔԱՋԱՋԵԱՆ ԷՅ .— Ըսուեցաւ թէ Նիկիոյցոսի կաթողիկոսութիւնն անվաւեր եւ անոր ձեռնադրած եպիսկոպոսներն ալ անվաւեր են : Հարկաւ կրօնական ձեռնհաս ատենն է մը ելած են այս վճիռները, զի Ընդ . ժողովոյ ձեռնհա-

տութենէն վեր է կաթողիկոսի մը եւ անոր ձեռնադրութեանց անվաւեր ըլլալուն վճիռ տալ, արդեօք որ ատեննէն ելած են այդ վճիռները :

ՔՈԼՈԼԵԱՆ ԷՅ .— Երեսփոխաններէն չատերը նոր են, եւ չըդիտեն այս խնդրոյն պատգամները, որք արդէն ծանր գերտարանք առած են եւ կէս ժամու չափ խօսելով աննար է որ պարզվին եւ զիւրովնեն ըլլան անոնց : ուստի կ'առաջարկեմ որ գիւտնական արձանագրութիւններէն քաղուածք մը հանելով տղվի եւ երեսփոխանաց հաղորդվի ի տեղեկութիւն :

ԿԱՊՈՒՏՆԻԿԵԱՆ ՍՐԲԱՋԱՆ .— Ձեզմու մը օրէնք չըկրնար ըլլալ երբէք : մենք իրբեւ հայ Էջմիածնայ աթոռոյն հետ կապված ենք կրօնապէս, եւ նորա հայրապետը կը ճանչնանք միայն զլուիս Հայաստանաց եկեղեցոյ : նոյն աթոռէն բղխած վարդապետութիւնները իրբեւ եկեղեցոյ բուն հարադատ ազրիւրէն ելած պարտինք ընդունելու եւ յարգելու : Վեհ . կաթողիկոսը երբ Աթոռը գնաց, անդրանիկ օրհնութեան կոնդակով մը հրահանգներ հաղորդած է մեզ Ստոյ եւ Աղթամարայ կաթողիկոսաց խնդրոյն վրայ, պէտք է նոյն կոնդակը կարգացվի ժողովին մէջ : պիտի տեսնէք որ Ստոյ եւ Աղթամարայ կաթողիկոսներ անվաւեր վճարված են, այս վճիռը համազումար եկեղեցական ատեան մը տուած է ու թն եպիսկոպոսաց եւ բազմաթիւ կրօնականաց ներկայութեամբ, ես ալ նոյն վճիռը ստորագրողներէն մէկն եմ : Ասանկ զեղծումներ եղած են ժամանակաւ, ինչպէս Աղթամարայ Դաւիթը թուոնիկեան (եւ կիլիկիոյ կողմերը գտնուած կարապետ անուն եպիսկոպոս մը : այս վերջինը լուի եպիսկոպոս մ'ըլլալով՝ օր մը հինգ վարդապետ մէկէն եւ կիսկոպոսութեան կոչեց եւ ինքն անոնց մէկ կաթողիկոս օծվելով Մուսապէկեանցին յաջորդեց նորա հեղինակութեանը հետեւելով, առանց հաւանութեան Աղղին եւ հակառակ այն կանոնաց, որ Մեծին Ներսեսի օրովը հաստատված էին, եւ որոյ կը հետեւի այսօր մեր Երեսփոխանական ժողովը : Նիկիոյցոս ալ հիմայ կելր եպիսկոպոսներ կը ձեռնադրէ կը ձգէ, կրնայ ըլլալ որ մէկն ալ վաղը Քրակիա կամ Հայաստան երթայ եւ նոր սերմեր սերմանէ : Հայս զեղծմանց առջեւ մեր պարտքն է անդրուելի եւ հաւատարիմ մնալ այն վճիռն : զոր մենք ստորագրեցինք եւ որ ինձի համար մահու եւ կենաց խնդիր մըն է :

ԻՓԷԿՁԵԱՆ ԷՅ .— Ձեմ կրնար ըմբռնել թէ Աղղին երեսփոխանական ժողովը ձեռնհա-

ստեփան չունենայ եկեղեցական խնդրոց մէջ, եւ Եջմիածնայ Կաթուղիկոս մը կամ Կրօնական ժողով մը աւելի ձեռնհաստեփիւն ունենայ, կը խնդրեմ այն եկեղեցական հայրերէն եւ երեսփոխաններէն որք Եջմիածնայ աթոռոյն գիմելու անհրաժեշտ պէտք կը տեսնեն, իրենց կարծիքը լաւ բացատրեն: Ասկէց զատ ըստեղծութէ Սոյ Կաթուղիկոսին ընտրութեան համար պարտինք Եջմիածնայ Կաթուղիկոսին գիմել եւ անկէ չնոր խնդրել որ իր հաւանութիւնը սայ, իրեն աթոռակից ճանչնայ, եւ ինչ որ Եջմիածնայ Կաթուղիկոսը գերազոյն ձեռնհաստեփիւն մը ունի, բայց միայն հաւատոյ մասանց մէջ. ուրեմն ինչ հարկ կայ թեմական ընտրութեան խնդրոց մը համար անոր գիմել, երբ հաւատոյ վերաբերեալ կեա մը չը կայ:

ՔԱՋԱՋԵԱՆ ԷՖ. — Իփէկճեան էֆ. կը սըխալի երբ կը կարծէ թէ աղղին երեսփոխանները թագ եւ գաւազան առած են իրենց ընտրողներէն զուտ կրօնական խնդրոց վրայ վճիռ արձակելու եւ այս ինչ եպիսկոպոսը կամ կաթուղիկոսը դատապարտելու. այս տեսակ իրաւաստեփիւն մը չը կրնար ունենալ Ընդհ. ժողովը, եւ ես կարող չեմ եկեղեցականի մը համար վճիռ տալ եւ զայն իբր ապօրինաւոր դատապարտել: Բուն խնդրոյն գալով Սոյ ինքնորոշող կաթուղիկոսին համար կրօնական ձեռնհաս առեան մը ապօրինաւորութեան եւ անվաւերութեան վճիռ տուեր է, եթէ այդ վճիռը եկեղեցական օրինաց համաձայն է՝ մեզի ուրիշ բան չը մնար՝ բայց եթէ յարգել այդ վճիռը եւ անոր հասեմատ մեր որոշումը տալ:

ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ. — Եջմիածին բառը շատ չը յեղ յեղենք. Կապուտիկեան Սրբազան եւ Կիւմիւշիէրտան էֆ. կ'առաջարկեն որ Սոյ խնդիրն Եջմիածնայ Կաթուղիկոսին անօրէնութեանը յանձնովի, Կապուտիկեան Սրբազան լաւ գիտէ թէ իրենք էին ասկէ առաջ Ընդհ. ժողովոյն մէջ Սոյ համար ընտրելիներ ցոյց տուողը, որու հասեմատ ընտրութիւն պիտի լլար: Ինչու հիմայ Եջմիածնի Կաթուղիկոսին գիմելու հարկ կը տեսնովի. Սը. Եջմիածնի Կաթուղիկոսին առանց ժողովոյ գործակցութեան ստած վճիռը չենք կարող ընդունիլ:

ՏԲ. ՏՈՎԱՆՆԵՍ ՄԱՐԵԱՆ. — Երեսփոխանական ժողովը որ եկեղեցական ու աշխարհական անդամներէ կը բաղկանայ, իր գոյութիւնն ու հեղինակութիւնը Ազգէն կընդունի եւ Ազգին ներկայացուցիչն է. հետեւապէս կը սլնդեմ եւ կը հաստատուի որ այս ժողովը մեր ա-

մեն կրօնական եւ քաղաքական խնդրոց մէջ կարծիք յայտնելու եւ որոշում տալու իրաւունք եւ ձեռնհաստեփիւն ունի, ներքիլի չէ բնաւ անոր իշխանութիւնը կասկածի ներքեւ թողուլ այս տեսակ խնդիրներ ծագած առեան, եւ որովհետեւ Կաթուղիկոսութեանց խնդիրներն որ այս ժողովին մէջ որոշումներ առած են, ժամանակ անցնելով շատերուն մտքէն ելած եւ նորոշող երեսփոխանաց բոլորովին անձանօթ են, կ'առաջարկեմ ինչպէս պահ մը առաջ Քօջուեան էֆէնտին ալ առաջարկեց, որ ատենական արձանագրութիւններէն քաղաւածք մը հանելով տպեալ բոլոր երեսփոխանաց հաղորդով, եւ այն ատեն պիտի տեսնենք թէ Եջմիածնայ կոնդակին եւ այլն կարգացվելուն պէտք կայ թէ ոչ:

ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ԷՖ. — Եջմիածնայ Կաթուղիկոսը դեռ իր կապերէն արձակված չէ, 67 ին փետրվարի մէջ կաթուղիկոսական խնդրոց վերջին նիստին արդիւնքը եւ Պալատէնեայի խնդրոյն կարգադրութեան համար եղած որոշումը պաշտօնական նամակաւ Ա.Ե.Ս. Կաթուղիկոսին հաղորդված էր, դեռ անկէ պատասխան մը եկած չէ: Մինչեւ որ այն կրօնական իրաւունքները զորս Պալատէնեան խլած է, Կաթուղիկոսին չըվերադառնան, եւ իր վրայ դրված կապերը չըխզեն, չ'ենք կրնար մեր գործերուն համար հոն գիմել եւ մեր ազատ Կաթուղիկոսներու եւ առաջնորդներու խնդիրներն անոր անօրէնութեանը յանձնել:

ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐ. — Ընդ. ժողովը եթէ Կաթուղիկոսներն ընտրելու իրաւունք ունի, կարող է նաեւ Կաթուղիկոսական խնդիրներն յուղել, կարծիք եւ որոշում յայտնել: Գալով Սոյ խնդրոյն արդէն քննված եւ Եստուֆեան էֆէնտին տուած տեղեկութեանց նայելով նախորդ ժողովներու քննութեանց եւ որոշմանց համեմատ կարգադրելու ձեռնարկված է, ուրեմն արձանագրութիւններէն ստուղենք, եթէ քննող ժողովներն Եջմիածնայ Աթոռոյն գիմելու պէտք տեսեր են, գիմենք, թէ ոչ մենք մեզէն լուծենք եւ վերջացնենք:

ԿՈՍՏՆՆԵ. — ՌՈՒ. ԷՖ. — Սահմանադրական օրէնքէն առաջ եկեղեցական օրէնքներ ունէինք, որք կը յարգվէին միշտ եւ պէտք է որ յարգվին: Կը հարցնեմ թէ ատենք Ընջված են թէ ոչ. թէ որ Ընջված չ'են եւ քանի որ մենք կրօնական ազգ մին ենք, պարտաւոր ենք պահպանել նոյն օրէնքները եւ թեմական հին կանոնաց եւ իրաւունքներու չըզպչել: Զ'եմ

կարծեր որ ամեն բանի մէջ ձեռներէց ըլլալնիս աղէկ արդիւնք մը ունենայ:


ԻՌԹՈՒՃ-ԿԱՐ-ԷՖ. — Սոյ եւ Ազգամարայ Կաթուղիկոսութեանց խնդիրն Եջմիածնայ Կաթուղիկոսին յանձնելը պարզապէս կը նշանակէ նոյն խնդիրն անլուծանելի վիճակի մը մէջ թողուլ: Քանի որ Եջմիածնայ Աթոռն իրեն սկզբունքը դրած է հակաթոռ ճանչնալ միւս երկու աթոռները, անհնար է որ զիջանի իրեն հաւասարապատիւ եւ աթոռակից ընդունելու: Եթէ Եջմիածնայ յանձնել ուղեր նոյն երկու աթոռները ջնջելու նպատակաւ է, պէտք է բացայայտ խօսովի եւ Ազգին կամքը յայտնովի, եթէ ոչ՝ մինչեւ հիմա եղածին պէս վարվելու եւ ընտրութիւնները կատարելու է առանց ուրիշին զիմելու, ինչպէս որ Ընդ. ժողովը Եջմիածնայ Կաթուղիկոսը կ'ընտրէ առանց ուրիշի հարցնելու: Եջմիածնայ Կաթուղիկոսը այս

պարագային մէջ քանի որ իրեն զիմելու ըլլանք՝ չըպիտի հաստատէ այն աթոռները, եւ մեզի պիտի ըսէ թէ դուք Եջմիածնայ թեմական էք, մի խառնվիք անոնց գործին, եւ այս կերպով անոնց ընտրութիւններն անկատար պիտի մնան. ուրեմն մեզի կը մնայ այս խնդիրը ինքնին լուծել եւ չըթողուլ Եջմիածնայ Աթոռոյն:

Ատենապետ Էֆէնտին տեսնելով որ ժամը 10 է եւ դեռ բաւական խօսք ուղղողներ կան, Ատենապետը կը գոցէ՝ վիճարանութիւնն ու խօսից կարգը յաջորդ նիստին շարունակվելու պայմանաւ:

Կ'որոշվի որ յառաջիկայ ուրբաթ օր (սեպտ. 4) Ընդ. ժողովը նորէն գումարովի:

ԱՏԵՆԱՊՊԻՐ ՏԻԳՐ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏ Գ. Ս. ՕՏԵԱՆ



Ազգային Ընհանուր Ժողովոյ 1870 օգոստոս 21 ի Ատեանին
մէջ եղած որոշման համեմատ իւրաքանչիւր նստին արձանագ-
րու թիւններն հետզհետէ պիտի հրատարակուին առանձին թեր-
թերով, այնպիսի եղանակաւ որ ՚ի վերջոյ տարեկան օտեւագ-
րու թիւնք կազմելով կարենան Ազգային պատմութեան հաստ-
մը ներկայացնել :

Կը ծախուի Գրավաճառ Գաֆաֆեան Պ. Յովսէփին խանու-
թը : Իւրաքանչիւր թերթին գինն է 100 փարսյ :